

11,402

Учреждение  
всего  
всего  
1931

9(47.925)

2-85

11,402

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

01 SEP 2011

Հայաստան

ՀՀ

31 AUG 2007

9(47.925)

24.8.2007

2-85

106

ԵՆԳԵԼՍԸ

3 Ե 4

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

106  
28363

66

8

2098



13.06.2013

1905 932 10

## I

Եղ. Բերնշտեյնի խմբագրությունը լույս տեսած „Dokumente des Sozialismus“ պարբերականի ելևերում 1903 թվին հրատարակվեց Ֆր. Ենգելսի՝ 1894 թ. նոյեմբերի 23-ին գրած մի նամակը, վոր անմիջապես հայկական հարցին և վերաբերվում։ Նամակը հասցեագրված և անվանապես չհիշատակված մի հայ «ընկերոջ»։ Տպագրելով այդ գրությունը, խմբագրությունը հայտնում և, վոր այն ստացված և «բարեկամների» միջոցով և ինքյան առանձին բացատրությունները կարող չեն։

Մի քիչ ավելին և հաղորդում նույն այդ վավերագրի մասին Ռ. Ս.-Դ. Բ. Կ. Կովկասյան Միության որդան «Պրոլետարիատի Կոնվը», վորը տպագրելով նույն տարում նամակի հայերեն թարգմանությունը, հայտնում և, վոր այն հասցեագրված և յեղել «Հնչակի» նախկին խմբագիր Ա. Նազարբեկին։ Նամակի գերմաներեն բնագիրը, ավելացնում և «Պրոլետարիատի Կոնվը» իր ունեցած տեղեկությունների համաձայն, հանձնվել և Եղ. Բերնշտեյնին և տպվելու յ «Սոցիալիզմի Դոկումենտներում»<sup>2</sup>։

«Պրոլետարիատի Կոնվը» հաղորդածը փոքր ինչ ավելի յ պարզում մեզ այն «բարեկամների» կերպարանքը, վորոնց միջոցով «Դոկումենտները» խմբագրի ձեռքն և հանձնված յեղել Ենգելսի նամակը։ Սակայն թերթը սխալվում և, ազդեցատի վերաբերմամբ։ Ո՞վ և, իսկապես, նամակի աղբյուրը։

Վերջինս գիմել և, Ենգելսին ու առաջաբան խնդրել նրանից «Կոմունիստական Մանիֆեստի» իր ձեռքով կատարած հայերեն թարգմանության համար. Ենգելսի նամակն այս դեմով պատասխանն և։

«Կոմունիստական Մանիֆեստի» վրի թարգմանություն մասին եր խոսքը ներկա դեպքում: Մինչև 1903 թ. «Մանիֆեստը» թեկուզ կիսատ, հայերեն թարգմանել ու տպագրել ելին հնչակյանները և, ըստ յերևույթին, յեթե վուչ հենց իրա՝ Նազարեկի ձեռքով, գեթ նրա խմբագրությունը ու նախաձեռնությունը: Հնարավոր է, վոր հենց այս հանգամանքն է շնչել «Պրոլետարիատի Կուլի» խմբագրությունը Ենգելսի աղբաստին Նազարեկի հետ նույնացնելու միտքը: Խմբագրությունը հաշվի չեր առնել վոր «Մանիֆեստի» հնչակյան թարգմանությունից դառա՞յալ բարոյ ելին գոյություն ունենալ չտպագրված, ուստի և անհայտություն մատնված, ուրիշները:

Մի այլ տեղ առիթ ենք ունեցել թվելու այն առարկությունները, վորոնց հիման վրա զբաղեցնող նամակի հավանական աղբաստը համարել ենք ուրիշ մի անձ: Մենք մատնանշել ենք Հովսեփ Աթաբեկյանին, վորը հայ միջավայրում մարքսիզմի նախավոր պրոպագանդիստներից մեկն էր համարվում ավանդաբար: Մի կողմ թողնելով բոլոր մյուս նկատառումները — գոյություն ունի Մ. Վարանդյանի ուղղակի ցուցմունքը: Վարանդյանը, վոր դաշնակների իդեոլոգներից է և մարքսիզմի կատաղի թշնամին՝ ուսանող ժամանակ, ինչպես պատմում է ինքը, պահ մի տարված է յեղել մարքսիզմով և Աթաբեկյանի հետ միասին մասնակցել «Մանիֆեստի» թարգմանությանը: Արձանագրելով այս փաստը, Վարանդյանը հիշում է Աթաբեկյանի դիմումը Ենգելսին և վերջինից ստացված պատասխանը: Պատմում է, վոր Աթաբեկյանը մերձավոր հաղորդակցության մեջ էր Կառլ Կոսկով, Յեռնինի և Պարվուսի հետ: Հիշում է նրա ճանապարհորդությունը Իտալիայում, վորտեղ առիթ էր ունեցել ծանոթանալու Տուրատիի և 1894 թ. Սիցիլիայի գյուղացիական շարժման ղեկավարների՝ Դեֆելիչեյի, Բարբատոյի և այլոց հետ: Հիշատակում է նրա մանր հոգիածները „Neue Zeit“-ում, նրա մասնակցությունը Կառլ Կոսկով և Պարվուսի կազմած մի կոչին, վոր նվիրված է յեղել թյուրքա-Հայաստանում տեղի ունեցած «վարդապետություններին» և լույս է տեսել գերմանական ու ավստրիական ս.-դ. մամուլի եջերում: Պատմվում է այնուհետև, վոր հայրենիք վերադառնա-

լուց հետո, Աթաբեկյանը հրաժարվեց յերիտասարդության «մեղքերից», յերես դարձրեց մարքսիզմից: Այս չեր խանգարում, հարկավ, վոր նրա վաղեմի գերմանացի բարեկամները հաճույքով հիշեյին „den feuerigen armenischen Genossen“: Վարանդյանին ուղղած նամակում նրա մասին հարցում եր անում «ինքը» Կառլ Կոսկով:

«Մանիֆեստի» այստեղ աղված թարգմանությունը անտիպ է մնացել: Շատ հաճախական է և հնարավոր, վոր 1894 թվականին «Մուրճ»-ում տպագրած «մարքսիստական» իր գրավարժությունների մեջ՝ առանց աղբյուրի հիշատակության քաղվածքներ անելով «Մանիֆեստից»՝ Մ. Հովհաննիսյանը — նույն ինքը՝ Վարանդյանը — ոգտագործում էր հայերեն այս թարգմանությունը: Ավելի ուշ՝ 1904 թվին նույն այս թարգմանության ձեռագիրն է, վոր ոգտագործվել է նոր մի թարգմանության համար, վորը լույս տեսավ Ժնևում Ռ. Ս.-Դ. Բ. Կ. հրատարակությամբ:

Ավելի նախանձելի չեր Աթաբեկյանի անձնական ճակատագիրը: Յերևանի մոտ գտնված սովխոզներից մեկում, Աթաբեկյանի նախկին կալվածքում, մինչև վերջին տարիները պահվում էր նրա բավականաչափ հարուստ մարքսիստական գրադարանը: Այստեղ առիթ ենք ունեցել տեսնելու Հեգելի, Ֆեյերբախի ու գիտական սոցիալիզմի կլասիկների մի շարք հին հրատարակությունները, այլև մարքսիստական բազմաթիվ նոր գրքեր, գերմանական ս.-դ. պարագլուխների, Աթաբեկյանի հին բարեկամների, ավստրո-գերմանացի Սյա գրքերի նախկին տերը Գերմանիայից վերադառնալուց հետո մոռացության եր ավել յերբեմնի իր հարցասիրությունը: Նվիրվելով հայրական կալվածքի շահագործմանը, յերբեմն նա հողավածներ եր տպում գյուղատնտեսական խնդիրների շուրջը: Հետագայում նա մտավ գինվորական ծառայության մեջ, իսկ 1907 թ. Դարսի շրջանից ընտրվեց յերկրորդ Պետական դումա, վորտեղ կադետական ֆրակցիային հարեց: Պատերազմի ժամանակ Դարսում, գինվորական ծառայության մեջ լինելով, վերջ տվեց կյանքին ինքնասպանությամբ:

Վոր իսկապես Ենգելսի նամակը Աթաբեկյանին է ուղղված յեղել, ներկայիս կարոտ չե այլևս վորևս ստուգման:

Մարքսի և Ենգելսի Ինստիտուտում պահված և Աթաբեկյանի 1894 թ. 1-ին նոյեմբերի թվակիր նամակը ուղղված Ենգելսին: Նամակի վերջում կարդում ենք կառուցվող մակադրությունը, վորով նամակագիրը հանձնարարվում է «գեներալին» — Ենգելսին — վորպես «ազնիվ ու յեռանդուն ընկեր»։ Վավերագրի բովանդակությունը կասկած չի թողնում այլևս, վոր Ենգելսի 1903 թ. հրատարակված նամակը այս դիմումի պատասխանն է հենց։

## II

Աթաբեկյանի Ենգելսին ուղղած այս նամակը անմիջական արժեք ունի անցյալ դարի 90-ական թվականների կովկասահայ ազգային շարժման իդեական-քաղաքական ձևակերպման տեսակետից միայն։

Այդ շարժումը, վոր առանձին թափով ծավալվել էր 1877—78 թ.թ. ռուս-տաճկական պատերազմից հետո՝ 90-ական թ.թ. սկզբներին, արտաքին ու ներքին մի շարք պատճառներով, ստացել էր մարտական «հեղափոխական» գունավորում։ Հետապնդած նպատակի իրագործումը — թյուրքահայերի «ազատագրումը» — պետությունների — առաջին հերթին Ռուսաստանի և Անգլիայի միջամտության հետևանք պիտի լիներ։ Յենթադրվում էր, վոր կատարելով Բեռլինի դաշնադրության խոստումը, միջազգային դիվանագիտությունը պիտի հարկադրեր սուլթանի կառավարությանը ռեֆորմներ ձեռնարկելու թյուրքա-Հայաստանում։ Այդ ռեֆորմները՝ հենակետ ունենալով պետությունների միջամտությունը՝ պետք է յիլակետ դառնային ինքնավար կամ անկախ Հայաստանի համար։ Կովկասահայ հասարակական հոսանքների մեջ արմատանում էր սակայն այն համոզումը, վոր պետությունների միջամտությունն առիթովը լինելու յեր հայկական ապստամբությունը։ Մտխովում էր միայն կարծիքների միությունը ապստամբության քաղաքական նպատակի, նրա տակտիկական և կազմակերպչական խնդիրների շուրջը։ Ապստամբության նպատակահարմարությունն իսկ վեճի առարկա յեր դառնում էր վերջո շարժմանը մասնակցող հասարակական առանձին խմբակցությունների համար։

Տարածայնություններն անդրադարձնում էին նախ շահերի ու հայացքների այն հակամարտությունը, վոր բխում էր հայկական հարցի միջազգային դրությունից։ Մյուս կողմից՝ նրանք արձագանք էին այն հակասությունների, վոր առաջ էին գալիս կովկասահայերի հասարակական տարրերոջման ներքին պրոցեսից։

Պետությունների միջամտության հեռանկարը շաղկապված էր միջամտող կողմերի հակամարտության հետ։ Ցարիզմի առաջխաղացումը դեպի Մերձավոր Արևելքի սահմանները յերես առ յերես էր դնում նրան մի կողմից ավստրո-գերման դաշնակցության, մյուս կողմից անգլիական իմպերիալիզմի հետ։ Յեթե Ելզաս-Լոթարինգիայի կորուստը կախման մեջ էր դրել Ֆրանսիան Ռուսաստանից, ապա Ռուսաստանի ձգտումը դեպի Պոլիս նույնպիսի կախման մեջ էր դրել Ավստրիան Գերմանիայից։ Սաղաղության վորևե խախտում յեվրոպական ցամաքի վրա, այս պայմաններում, առաջ կբերեր միայն յերրորդ ուժի — Անգլիայի — գերակշռությունը։ Այս նկատառումը հարկադրում էր «խաղաղաբար» ցարի կառավարությանը՝ հրաժարվել Մերձավոր Արևելքի վերաբերմամբ անմիջական ռազմական ծրագրերից։ Համաշխարհային պատերազմ Պոլսին տիրանալու համար, պատերազմ, վորի բխիտը Անգլիայի ձեռքում պիտի լիներ, — դրում էր նույն այդ ժամանակ Ենգելսը, — սա հենց այն դրությունն է, վորից խառնափառ համար ռուս դիպլոմատիան ջանք էր անում կես դարից է վեր. քանի վոր այդ դրության մեջ նա իր պարտության հեռանկարն էր տեսնում»։

Ռուսաստանն ըստ ամենայնի հիմքեր ուներ սպասողական, իսկ յերբեմն նաև թշնամական, դիրք ընդելու մասնավորապես հայկական շարժման վերաբերմամբ, վորչափ անգլիական լիբերալների «հայասիրական» տրամադրությունների աճումը միշտ ավելի ու ավելի յեր դիպչում ռուս ռազմա-ֆեոդալական իմպերիալիզմի շահերին Հայաստանում և Անգլիկականում։

Մինչև անցյալ դարի վերջին քառորդի սկզբները Անգր-կովկասը Ռուսաստանի համար բնորոշ ռազմական մի ուղևորակցի յեր, վորտեղ — ըստ Ենգելսի — «քաղաքացիա-

կան իշխանությունն ու իրավական հիերարխիան ռազմական հիմունքներով են կազմակերպված և վորի ծախքերը պետք է հոգար ժողովուրդը»<sup>9</sup>։ Անդրկովկասյան յերկիրը ռուսների գրաված Թիֆլիս կենտրոնակետով — գրում էր Ենգելսը 1854 թ. — կարող է նկատվել ավելի շուտ ինքնուրույն մի պետություն, քան հզոր կայսրության բաղադրիչ մի մաս»<sup>10</sup>։

Անդրկովկասի քաղաքական այս դրությունն ուղղակի պայմանավորված էր իր և ռուս կենտրոնավայրերի տնտեսական կապի թուլությամբ։

Բնորոշելով Կովկասը վորպես Կենտրոնական Յեվրոպական Ռուսաստանի գաղութ՝ իր „Развитие капитализма в России“ աշխատության մեջ Լենինը գրում է՝ «նրա տնտեսական «նվաճումը» Ռուսաստանի ձեռքով շատ ավելի ուշ կատարվեց, քան քաղաքականը. լիակատար չափով տնտեսական այդ նվաճումը չի ավարտված նույնիսկ մինչ հիմա»<sup>11</sup>։ Անդրկովկասի տնտեսական «նվաճման» պրոցեսը, յերկրի կոռնիզացիայի, նրա հում նյութեղենների պահեստի ընդլայնման և նրան ռուս ֆաբրիկաների արտադրած ապրանքներն սպառող շուկայի վերածելու պրոցեսը, առանձին ուժ ստացավ միայն դարի վերջին քառորդի ընթացքում։ Այս յերևույթը չէր կարող չանդրադառնալ յերկրի հասարակական-տնտեսական կացության ու նրա քաղաքական դրության վրա։ Սոցոր փոփոխություններ կատարվեցին ցարիզմի և անդրկովկասյան ազգությունների, ինչպես նաև ազգությունների ներքին փոխհարաբերության մեջ։ Սրան համընթաց հասարակական-քաղաքական ուժերի վերախմբավորումներ տեղի ունեցան նաև յուրաքանչյուր ազգության ներսում։ Յարիզմի ռուսիֆիկատորական քաղաքականությունը, վոր ուղիներ էր հարթում Անդրկովկասում ռուս առևտրա-արդյունաբերական կապիտալի անմիջական տիրապետության համար, յայլևայլ արգելքներ էր ստեղծում կովկասահայ բուրժուազիայի ազգայնորեն տարանջատ աճումի առաջի՝ իր հերթին՝ անդրկովկասյան առևտրական կապիտալի փոխանցումը դեպի զարգացման արդյունաբերական շրջանը, նպաստավոր դրություն էր ստեղծում կովկասահայ բուրժուազիայի տիրապետող վերնախավերի հետամտած շահերի և ցարիզմի

վարած քաղաքականությունից ավելի ու ավելի սերտ խաչաձևան համար։ Վորչափ յերևան էր գալիս ցարիզմի թշնամական վերաբերմունքը դեպի հայկական շարժումը՝ կովկասահայ բուրժուական լիբերալիզմի իդեոլոգները հարկադրված էյին տեսնում իրենց հեռանալ շարժման անմիջական ղեկավարությունից՝ վերապահելով այդ կովկասահայ մանրբուրժուական նացիոնալիզմի առաջնորդներին։ Այս հանգամանքն էր հենց շարժման արմատականացման պայմաններից մեկը։ Նույն այս ուղղությամբ էր ազդում գյուղի դասակարգային շերտավորման խորացող պրոցեսն ու հայ բանվոր մասսայի համախմբումը քաղաքներում։ Չուրկ տակավին դասակարգային ինքնագիտակցությունից, ամբողջովին յենթակա ազգայնական տիրապետող իդեոլոգիայի ազդեցություն՝ այդ մասսան ամենից դյուրաբորբոք տարրն էր մանրբուրժուական նացիոնալիզմի բանակում։ Չեր կարող, իհարկե, չանդրադառնալ Կովկասահայ շարժման հետագա զարգացման վրա նաև 90-ական թ.թ. սկզբների ռուս հեղափոխական շարժման վերելքը։

Այս յերևույթներն էյին, վոր պատճառ դարձան հայկական շարժման «միասնական ֆրոնտի» կազմակերպչական, ի վերջո նաև իդեակոն-քաղաքական, տարրալուծման, Սնող տարաձայնությունների շնորհիվ Թիֆլիսում 1890 թվականին կազմակերպված «Հայ Հեղափոխականների (sic) Դաշնակցության» շարքերից, — կազմակերպության, վոր համանակցության շարժմանը շարժմանը մասնակցող այլազան խմբում էր իր շարքերում շարժմանը մասնակցող այլազան խմբակներ, — հեռանում են ինչպես ձախերը — հնչականները (1891 թ.), նույնպես և աջերը — լիբերալները (1892 թ.)։ Բնորոշ է, սակայն, վոր ինչպես «Դաշնակցությանը» հավատարիմ մնացած կենտրոնը — դաշնակցականները, նույնպես և նրա շարքերից հեռացած հնչակյանները, ինչպես նաև մյուս մանր, նոր ստեղծված, կազմակերպությունները, յուրացնում էյին արմատական, հեղափոխական, սոցիալիստական կամ անարխիստական ֆրադեոլոգիա։ Անհրաժեշտ էր համարվում տալ շարժմանը ծրագրորեն ավելի հստակ կերպարանք։ 80-ական թ.թ. վերջին ձևակերպված հնչակյան ծրագրի և գաղափարախոսության վրա՝ արդյունավետ իդեա-

ների ունեցած ազդեցութիւնը հաջորդ տասնամյակի սկզբներին զիջում եր իր տեղը յուրաքանչեւ մարքսիստական ֆրազեոլոգիային)։ Այդ ֆրազեոլոգիան զգալի յեր ամենից շատ 1890—94 թ.թ. հնչական պարբերականների («Հնչակ»-ի և «Գաղափար»-ի) եջերում։ Սրան կից նույն այդ տարիներին ե, վոր հնչականները թարգմանեցին ու հրատարակեցին մի շարք բրոշյուրներ, ինչպես՝ Դիկշտեյնի «Ով ինչով ե պարում», Պլեխանովի «Մայիսի մեկը», Ակսիոտի «Մի գլուխ «Բանվորական շարժումից», Լասսալի «Սահմանադրութեան մասին» և այլն։ Դարձյալ հնչականներն ե, վոր պատրաստեցին տպագրութեան համար Բեքելի «Կինը և սոցիալիզմը» և սկսեցին, ինչպես տեսանք, «Մանիֆեստի» տպագրութիւնը։

1893 թ. արհեստավորների և յերիտասարդ մտավորականների մի խմբակ հիմնեց Թիֆլիսում «Հայ Բանվոր Հեղափոխականների Աստոցիացիա» անունով մի կազմակերպութիւն։ Կազմակերպութիւնը նվիրված եր ամբողջովին նույն թյուրքահայ խնդրին։ Բնորոշ ե սակայն, վոր Աստոցիացիայի ծրագիրն ու գաղափարախոսութիւնը խարխափում եր դարձյալ անարխո-նարոդնիկական գաղափարների շաժանդաղում։ Փոյթ չե, հարկավ, վոր այդ գաղափարները ջրահեղձ եյին լինում վերջիվերջո մերկապարանոց մանր-բուրժուական նացիոնալիզմի հեղեղատում։

Յերիտասարդների մի այլ խմբակ, գլուխ ունենալով Ալ. Աթաբեկյանին, — Հովսեփ Աթաբեկյանի ազգակցին, — 1892—93 թ.թ. դուրս ե գալիս հնչականների շարքերից և թեքվում դեպի անարխիզմ։ 1893—94 թ.թ. խմբակը լույս ե ընծայում Մալաթեստայի, Կրապոտկինի, Ել. Ռեկյուլի մի քանի բրոշյուրները և հրատարակում միաժամանակ «Համայնք» պարբերականը։ «Համայնք»-ի եջերում անարխո-նարոդնիկական գաղափարները միախառնվում եյին դարձյալ նացիոնալիստական մյուս հոսանքների հետ, ձայնակցելով քաղաքականապես ժամանակի հնչակ-դաշնական գաղափարախոսութիւններին։

Հատկանշական ե, վերջապես, վոր 1892 թ. վերակազմվելով վորպես «Հայ Հեղափոխական Դաշնակցութիւն»,

իրենց առաջին համագումարում դաշնակցականները ևս անհրաժեշտ գտան ազգաբարեւու նարոդնիկական ու նարոդովոյան մի շարք սկզբունքներ (կազմակերպական ֆեդերալիզմ, քաղաքական տերրոր, «գլուխացիական համայնքի», «համայնական սեփականութեան», «համայնական աշխատանքի» տեսութեան վորոշ տարրերը և այլն)։ 1894 թվին դաշնակցականները հրատարակեցին կուսակցութեան՝ այս սկզբունքներին կառչող ծրագիրը, վորի մեջ վորոշ տեղ եր հատկացված նաև «իրեւական ապագային» — սոցիալիզմին։

90-ական թվականների առաջին հագամայակին թյուրքահայ շարժմանը մասնակցող կովկասահայ ազգայնական կազմակերպութիւնների իրեական-քաղաքական շերտավորութեան ընդհանուր այս ֆոնի վրա յե, վոր պետք ե ժոտեանք նաև Հ. Աթաբեկյանի՝ Ենգելսին ուղղած նամակի գնահատականին։

Նամակի հեղինակը սկսում ե հեռուներից — Հայաստանի պատմութեան համառոտ ուրվագծից։ Այդ ուրվագծի վրա իշնում և ինքյան հայկական նացիոնալիզմի տիրական շեշտը։ Սակայն պատմական դեկորներին մեջ նամակի հեղինակը ներկայացնում եր հայերի ընթացիկ կացութիւնը սոցիալական ավելի հստակ կոնտուրներով, քան հանդիպում եմք սովորաբար նրա ժամանակակիցների գրածներում։ Խոսելով թյուրքիայի մասին, հեղինակը շեշտում ե շահագործվող թյուրք մասսայի կացութիւնը և հայ կապիտալիստների դերը, «վորոնք ավազակաբարո քուրդ ցեղերի և թյուրք փաշաների հետ մեկտեղ թալանում ու կեղեքում են գլուխահան կազմակցութիւնը»։ Ժխտելով ինչպես թյուրքաց, նույնպես և Ռուսաց Հայաստանում «դասակարգային շեշտված անտոգոնիզմ», «հստակորեն տարրորոշված պրոլետարական մասսա և բուրժուազիա», հեղինակն այնուամենայնիվ գրում ե՝ «բայց և այնպես միամտութիւն կլիներ բացասել դասակարգային տարբեր շահերի, տնտեսական կոնտրաստների գոյութիւնը և առհասարակ՝ յենթադրել, թե պետք ե հետաձգել սոցիալիստական պրոպագանդն այսօր, յերբ տնտեսական ճնշման և արեւելյան բռնակալութեան լծի ներքո հեղափոխութեան հեղեղը այնքան դուրացնում ե պրոպագանդի

դործն ու գյուղացիական մասսայի կազմակերպությունը»։ Ուշադրութեան արժանի յե նաև հեղինակի կարծիքը հայ «բանվոր դասակարգերի» («աշխատավոր մասսաների» Ա. Հ.) դերի և նշանակութեան մասին. սրանք և, վոր նկատում եյին «նոր գաղափարների լավագույն պրոպագանդիստներ» գյուղում։ Հետաքրքրական է, վոր բնույթագրելով կովկասահայերի կացութիւնը, նամակագիրը չի ժխտում նրանց հեղափոխական անելիքը Ռուսաստանում. «Նրանց պատմութիւնը, ինչպես նաև նրանց հեղափոխական շարժումը — գրում է Աթաբեկյանը — զուգընթաց է Ռուսաստանի պատմութեան։ Կոյի միահեծանութեան դեմ, ահա այն անկյունաքարը, վորին դեմ են առնում Ռուսաստանի կայսրութեան — յեվրոպական ռեակցիայի հսկայական պահեստազնդի — բոլոր ժողովուրդները»։

Այս բոլորը ցույց է տալիս սոցիալիստական և մարքսիստական գաղափարների վորոշ ազդեցութիւնը հեղինակի հայացքներին վրա։ Այնուամենայնիւ հիմնականում նա ևս կանգնած էր 90-ական թ.թ. առաջին հնգամյակի համար բնորոշ կովկասահայ մանր-բուրժուական նացիոնալիզմի ընդհանուր պլատֆորմի վրա։ Ընդգծելով Բեռլինի դաշնադրութեան չարաքիտ դերը, գանգատվելով յեվրոպական պետութիւնների «կարեկցութեան պլատոնական արտահայտութեան» մասին, նամակի հեղինակը չի նկատում այն կապը, վոր գոյութիւն ունեն պետութիւնների արեւելյան քաղաքականութեան և թյուրքերի՝ Հայաստանում գործադրվող «վայրագութիւնների» միջև։ Մասնավորապես նա անտես է անում ցարիզմի դերը թյուրքիայում։ Կովկասահայ մանր-բուրժուական նացիոնալիզմի ներկայացուցիչների հետ մեկտեղ փաստորեն նա ևս կենտրոնացնում է ռուսահայ մասսաների ուշադրութիւնը թյուրքահայ խնդրի լուծման վրա, զատում թյուրքահայ շարժումը թյուրքիայի մյուս ազգութիւններին պատկանող շահագործվողների պայքարից։ Շեշտելով կապիտալիստական շահագործման մահացող ձևերի նշանակութիւնը, վաշխառուների ու առևտրականների դերը, նամակագիրը բացահայտորեն անգիտանում էր առևտրա-վաշխառական կապիտալի քայքայիչ ազդեցութիւնը հողատիրու-

թեան համայնական ձևերի վրա, լուծեան տալիս կապիտալիստական հարաբերութեանց նոր ձևերի հեղաշրջիչ դերն Անդրկովկասում, թերագնահատում մասսաների պրոլետարացման աստիճանը, մանավանդ և Անդրկովկասում, միաժամանակ թերագնահատելով նաև պրոլետարիատի ու բուրժուազիայի «դասակարգային շահերի տարբերութիւնը», վորով ստեղծվում եյին արդեն բոլոր անհրաժեշտ նախադրյալները նրանց դասակարգային ներհակութիւնը գիտակցութեան հասցնելու համար։ Նամակի հեղինակի համար Հայաստանի աշխատավոր մասսան նոր գաղափարների դրոշակակիրն է միայն գյուղում։ «Մանիֆեստը», Աթաբեկյանի յենթադրութեամբ, պետք է տարածվեր առաջին հերթին — չէ թե բանվորութեան մեջ, այլ քաղաքի և գյուղի մանր-բուրժուական մասսայի մեջ։ «Տպագրելով այն, — գրում է Աթաբեկյանը, — մենք հասկանալի յե, գյուղի աշխատավոր մասսայից զատ, գլխավորապես նկատի ունենք նաև քաղաքների մանր վաճառականներին, արհեստավորներին, մեր տակավին զգայուն ինտելիգենցիային, ռուսանոց յերիտասարդութեանը և այլն»։

Հեղինակի մտայնութեան մանր-բուրժուական նացիոնալիստական արժատներն ակներև են։ Նամակը պատմական արժեք է ներկայացնում այն տեսակետից, վոր նրա մեջ անդրադառնում են վոչ միայն գրողի, այլև իր համախոհների կարծիքները։ Նամակի սկզբում խոսելով «Մանիֆեստի» թարգմանութեան ու հրատարակութեան խնդրի մասին, ինչպես նաև վերջում, վորտեղ շոշափած են հայկական շարժման հեռանկարները և «Մանիֆեստի» դերը Հայաստանում հեղինակը արտահայտվում է «սոցիալիստ-հեղափոխականների» հավաքականութեան անունից։ Մեր տրամադրութեան տակ չկան նարոդնիկական («սոցիալիստ-հեղափոխական») վորեւե խմբակի հետ Աթաբեկյանի ունեցած կապը նշող ուղղակի ցուցմունքներ։ Սակայն հնարավոր է վորոշ կապ յենթադրել Աթաբեկյանի և նարոդնիկական վորեւե խմբակցութեան միջև։ Գերմանիա մեկնելուց առաջ, Աթաբեկյանը յերկու տալի ռուսանոց էր Պետերբուրգի համալսարանում, վոր-

տեղ նա կարող եր հարած լինել նման վորևե խմբակցութեան: Գուցե նարոգնիկական հին կապերի բերումով ե հենց, վոր նա մատնանշում ե հայերի մասնակցութեան անհրաժեշտութեանը ուս հեղափոխական շարժման մեջ: Բայց հնարավոր են նաև ուրիշ յենթադրութեաններ: Նամակից տեղեկանում ենք, վոր «Մանիֆեստից» առաջ Աթաբեկյանի խմբակը թարգմանել եր և տպագրութեան հանձնել Ենգելսի «Գիտական սոցիալիզմ» („Die Entwicklung des Sozialismus von der Utopie zur Wissenschaft“) գրվածքը: Նկատի առնելով, վոր այդ գրվածքը լույս ե տեսել դաշնակցականների հրատարակութեամբ (1894 թ.) կարելի յեր յենթադրել, վոր Աթաբեկյանը, գրվածքի հավանական թարգմանիչը, հարում եր դաշնակցականներին: Այս յենթադրութեան ոգտին կարող եր վկայել թերևս նաև Աթաբեկյանի ընկերոջ, «Մանիֆեստի» թարգմանութեանը մասնակցած Վարանդյանի, իդեական-քաղաքական հետագա եվոլյուցիան: Սակայն նամակի մեջ արծարծվող գաղափարները շատ են տարբերվում ժամանակի դաշնակիզմի համար բնորոշ իդեոլոգիայից: Հեղինակի հայացքներն ավելի մեծ չափով ազգակցութուն են հայտարարում 90-ական թ.թ. սկզբների հնչակյանների տարրինակ մարքսիզմի հետ: Հայտնի յե միաժամանակ, վոր յերբեմն հենց հնչակյաններն ե, վոր «սոցիալիստ-հեղափոխականներ» եյին հորջորջում իրեն: <sup>12</sup> / Հնչակյաններն ե, վոր նշավակում եյին ցարիզմը ու համակիր խոսքեր ուղղում ուս հեղափոխական շարժման հասցեյին <sup>13</sup>, նրանք ե, վոր նույն այդ ժամանակ գրում եյին հայերի ու թյուրքերի դասակարգային շերտավորման մասին <sup>14</sup>, նրանք ե, վերջապես, վոր — ինչպես անում ե իր նամակում նաև Աթաբեկյանը — «առաջադրում եյին Հայաստանի անկախութեան խնդիրը, մինչդեռ մյուս խոշոր կաղմակերպութեանը — Դաշնակցութունը — թյուրքահայաստանի ինքնավարութեան հարց եր հարուցանում միայն:» Ուստի և պատահական չե, գուցե, վոր, տարիների ընթացքում գրվանի տակ ննջելուց հետո, Ենգելսի վերը հիշատակված նամակը հանձնվում եր Բերնշտեյնին մ. այն 1903 թ., մի ժամանակ, յերբ հնչակյան իդեոլոգիայից վրձանք, կովկասահայ բանվորական

շարժման ճնշման տակ, անհրաժեշտ եյին համարում շաղկապել իրենց գործունեյութեանը ցարիզմի դեմ Անդրկովկասում և Ռուսաստանում ծավալվող հեղափոխութեան հետ և այդ նպատակով 90 ական թ.թ. սկզբներին ձեռնարկում եյին հնչակյան «մարքսիզմի» ռեստավրացիային, Ենգելսի նամակ-պատասխանը, հավանական ե, վոր հնչակյան գերեվարութեան մեջ լինի գտնված տարիների ը թացքում: Հավանորեն այս հանգամանքն ե գլխավորապես, վոր առիթ ե տվել «Պրոլետարիատի Կովի» խմբագրութեանը շաղկապել Ենգելսի գրութեանը հնչակյանների պարագլուխ Ա. Նազարբեկի անվան հետ:

### III

Աթաբեկյանի ցանկութեանը «հայանպաստ» հորված ստանալ Ենգելսից՝ դեմ եր առնում վերջինիս կտրական մերժումին: Ենգելսն հնարավոր չեր համարում դատել մ. նյութի մասին, վոր չեր «ուսումնասիրել անձնապես»: Նա հրաժարվում եր գրել մի հրատարակութեան համար, վոր լույս պիտի տեսներ իրեն անծանոթ լեզվով: Թերկյուզ ուներ թե՛ դիտավորյալ կերպով կամ նույնիսկ առանց վորև դիտավորութեան «հայանպաստ» իր խոսքերը կարող են խեղաթյուրվել, մանավանդ թե՛ շահագործվել ուսանների նվաճողական քաղաքականութեան ոգտին: Նման յերկյուզի տեղիք եր տալիս ի եկուզ հենց ուս ցարիստական մամուլը:

Ըստ յերևույթին՝ Ենգելսը մերժում եր Աթաբեկյանի խնդիրը՝ վորչափ անկարող եր քաղաքական կոնտակտ գտնել հայկական շարժումով շահագրգռված հայ և ուս տիրող մտայնութեան հետ: Պատրվակ բռնելով իր անծանոթութեանը հայ լեզվին ու առաջադրած հարցին, Ենգելսը տուրք եր տալիս միայն յեվրոպացուն հատուկ քաղաքավարութեանը: Ըստ վորում, կարգալով արևելյան հարցի հիմնական պրոբլեմները շոշափող նրա «անձնական ուսումնասիրութեանները» չի կարելի չհամոզվել, վոր անձնապես նա բավականաչափ արդեն ուսումնասիրել ու ծանոթ եր խնդրի առարկա յեղած նյութին:

Թյուրբիայի ներսում ծավալվող ազգային շարժումների սոցիալ-քաղաքական բովանդակութեանը նույնչափ լավ եր

հայտնի Ենգելսին, վորչաի նաև դրանց ընդհանուր քաղաքական նշանակությունը: «Իսկապես — գրում եր Ենգելսը 1890 թվին — Թյուրքական տիրապետությունը, ինչպես և արևելյան ամեն մի տիրապետություն, անկարելի չե միատեղել կապիտալիստական հասարակության հետ. դժվարությամբ ձեռք բերված հավելյալ արժեքը չի ապահովագրված զիջատիչ սատրապների և փաշաների ձեռքերից, չկա բուրժուական արդյունագործության հիմնական պայմանը — վաճառականի անձի ու նրա սեփականության ապահովությունը»<sup>15</sup>) Վոր հայ վաշխառուներն ու վաճառականները Թյուրք փաշաների և քյուրդ շեյխների հետ մեկտեղ շահագործում եյին Թյուրքիայի գյուղաբնակչությունը — այդ մասին շատ լավ գիտեր նաև Ենգելսը, վորն իր ժամանակ ուշադիր կերպով ուսումնասիրել եր Ուրբաթաի դրվածքները «Անտի-Դյուրինգ»-ի մեջ, բնորոշելով Թյուրքիայում տիրապետող շահագործման ձևը, Ենգելսը գրում եր. «Միայն Թյուրքերն ե, վորոնք Արևելքում իրենց նվաճած յերկրներում (մտցրին մի տեսակ կալվածատիրական ֆեոդալիզմ)»<sup>16</sup> Կալվածատիրական ֆեոդալիզմի այդ յերկրում գյուղացիների շահագործման «արևելյան» ձևի կողքին ծագում են հետագայում շահագործման «ժամանակակից», «արևմտյան», յեղանակները: «Իսլանդիայից մինչև Ռուսաստան, Փոքր Ասիայից մինչև Յեգիպտոս՝ գյուղացիական յերկրի գյուղացին գոյություն ունի նրա համար, վորպեսզի նրան շահագործեն: Այսպես ե յեղել Ասորեստանի և Պարսից աշխարհակալությունների որերից ի վեր: Սատրապը alias փաշան շահագործողի գլխավոր արևելյան ձևն ե. վաճառականն ու փաստաբանը — ժամանակակից արևմտյանը»<sup>17</sup> Այսպես եր գրում Ենգելսը 1882 թվին: Սակայն դեռ դրանից շատ առաջ, ինչպես այդ ցույց են տալիս «Նյու-Յորքի Տրիբունի» համար նրա գրած հոդվածները, Ենգելսը գիտեր նաև Թյուրքիայի գյուղացիության «ժամանակակից», «արևմտյան» ձևի շահագործման սկզբնավորումի մասին: Ենգելսին հայտնի յեր ընդ ամին նաև հայ առևտրական բուրժուազիայի դերը, վորը Թյուրքական շուկաներին անգլիական ֆաբրիկատներ եր մատակարարում և յեվրոպական ապրանքների միջոցով դուրս

ջրում ասպարեզից Թյուրքիայի տնայնագործության արդյունքները:<sup>18</sup> Ենգելսը բնորոշում եր հայ բուրժուազիայի յեվրոպականացված այդ տարրերին, վորպես Թյուրքիայի կապիտալիստական պրոգրեսի ներկայացուցիչների: «Ովքեր են Թյուրքիայի առևտրականները — հարցնում եր նա — Համենայն դեպս՝ վոչ Թյուրքերը: Յերբ դեռ սրանք նախնական նոմադների կենցաղով եյին ապրում, առևտուր անելու նրանց յեղանակը քարվան կտրելն եր. հիմա այնտեղ, վորտեղ փոքր ինչ քաղաքակրթվել են, նրանց առևտրի յեղանակը ամեն տեսակի կամայական ու ճնշիչ հարկանանությունն ե: Ծովային մեծ նավահանգիստներում տեղավորված հույները, հայերը, սլավոնները ու ֆրանկները իրենց ձեռքերն են հավաքել ամբողջ առևտուրը և վոչ մի հիմք չունեն, անշուշտ, շնորհակալ լինելու Թյուրք բեկերից և փաշաներից իրանց տված այդ հնարավորության համար: Թեկուզ հեռացնեն Յեվրոպայից բոլոր Թյուրքերին — առևտուրը չի տուժի դրանից»<sup>19</sup>

Թափանցելով Ենգելսի այս տողերի մեջ՝ հեշտ ե արձանագրել, վոր նրան շատ լավ հայտնի յեր, ինչպես Թյուրքիայի «քրիստոնիս» ժողովուրդների ազգային շարժման բուրժուական բնույթը, նույնպես նաև այն հանգամանքը, վոր շարժումը գլխավորողը առևտրական բուրժուազիան եր — «ժամանակակից», «արևմտյան», այսինքն՝ կապիտալիստական հարաբերությունների այդ դրոշակակիրը Թյուրքիայում: Մասնավորապես Թյուրքիայի «քրիստոնիս» ժողովուրդներին պատկանող բուրժուական այդ հատվածն եր, վոր պայքարում եր <sup>19</sup>նաուրքի այն սիստեմի դեմ, վորը, ըստ Մարքսի, «տաճկական տիրապետության պահպանման խորհրդավոր միջոցներից մեկն եր»<sup>20</sup>)

Սակայն Ենգելսը վոչ միայն Թյուրքիայի ազգային շարժումների դասակարգային գսպանակն եր հայտնաբերում, այլ և արտաքին-քաղաքական նրա բովանդակ մեխանիզմը:

Ուսումնասիրելով Թյուրքիայի տնտեսական հետազոտությունների պատճառները, խորամուխ լինելով նրա քաղաքական կազմավորման նախապայմանների մեջ, Ենգելսը բնագործ եր այն դերը, վոր կատարում եր «յեվրոպական հավատարմություն»

✓ բաղադրության սխառմը» և „status quo“-ն — այդ «հնամաշ գիպլոմատիական լաթը» — «Թյուրքիայի անբաժանելիութան այդ հին ֆիլիստրական տխմարությունը» — ինչպես արտահայտվում է նա Մարքսին ուղղած նամակներից մեկում: 21)

✓ Մարքսը տեղին եր նկատում թե „status quo“-ն է հենց, վոր պահում է Թյուրքիան կազմալուծման այն աստիճանի վրա, «վորը խանգարում է սուլթանին ցարի ձեռքից ազատվելու, իսկ սլավոններին — սուլթանի ձեռքից» 22) Հավերժացնելով «քրիստոնիա» հպատակների ճնշումը Թյուրքիայի կողմից՝ Թյուրքիայի անձեռնմխելիության տեսությունը հատկացնում եր ցարին այդ վերջինների պաշտպանի դերը: 22)

✓ Այս դրությունը ուղիղ եր վոչ միայն Յեվրոպական Թյուրքիայի, այլ և վոչ նվազ չափով Ասիական Թյուրքիայի, մասնավորապես Հայաստանի նկատմամբ: Ենգելսը մատնանշում եր, վոր արդեն XVIII դարից ի վեր Ռուսաստանը ասպարեզ եր գալիս Կովկասի քրիստոնիա պետությունները և Թյուրքահայտակ հայ քրիստոնիաներին «ազատագրողի» դերում: 23) Հետագայում գրավելով Կովկասը և շահագործելով քրիստոնիաներին «հովանավորողի» դերը, Ռուսաստանը խախտում եր յեվրոպական «հավասարակշռության սխառմը», հրով ու սրով մաքրում իր առաջնթացությունը ուղիները դեպի հարավ: Մարքսի և Ենգելսի թունալից սարկազմը անխնայորեն ծաղրում եր ցարիզմի այդ «ազատարար միսիան» Արևելքում, մերկացնելով ցարիզմի ու նրա ագենտների աննեքսիոնիստական մտահոգացումներն ու պրակտիկան Բալկաններում և Առաջավոր Ասիայում:

✓ Ղրիմի պատերազմի նախորդին Ենգելսը նախազգուշացնում եր, վոր Ռաթումի նավահանգստի և Ղարսի — «Հայաստանի ամենահարուստ և ամենից կուլտուրական այդ մասի» — գրավումը հնարավորություն կտա Ռուսաստանին՝ զավթել Անգլիան և Պարսկաստանը միացնող Տրապիզոնի վրայով անցնող առևտրական ճանապարհը և ստեղծել իր համար ռազմապետացիոն բազա, ինչպես Անգլիայի, նույնպես նաև Փոքր Ասիայի դեմ: 24) Ենգելսի այս տեսակետին համաձայն եր նաև Մարքսը «Յեթե Ղարսը Երզրումի բանալին է — գրում եր

Մարքսը, — ապա Երզրումը Պոլսի բանալին է և Անատոլիայի ստրատեգիական ու առևտրական ճանապարհների կենտրոնակետը»: 25)

Տակավին 1848 թ. հեղափոխությունից ի վեր Մարքսի և Ենգելսի համար պարզ եր այն վտանգը, վոր Թագցնում եր իր մեջ Ռուսաստանի առաջխաղացումը: Ռուսաստանի նվաճողական ներմուծը Փոքր Ասիայի խորքը, Թյուրքիայի զավթումը Ռուսաստանի ձեռքով, Արևելյան Հռոմեական կայսրության վերածնունդը — այս բոլորը նրանք զգալիս տեսություն էյին համարում: հեղափոխության գործի համար: «Նոր Հոռմը — նրանց կարծիքով — ավելի անբարոյականացնող ազդեցություն կունենար, քան հին Հոռմը, և Պոլիսը ցարական գախտնի ներքո կլինեի ռազմատենչ ու ավելի ուժեղ, քան սուլթանի իշխանության ներքո»: 26) Ուստի և հասկանալի չէ՝ թե ինչու, ջերմորեն պաշտպանելով Թյուրքահայտակ «քրիստոնիաների» ազգային ինքնորոշման իրավունքը, և Մարքսը, և Ենգելսը կատաղի դիմադրություն էյին ցույց տալիս նրանց «ազատագրմանը» ցարիզմի միջոցով: Ղրիմի պատերազմի նախորդին նրանք պաշտպանում էյին Ռուսաստանյան կայսրության փլատակների վրա «ազատ, անկախ քրիստոնեական պետություն» (Ենգելս) ստեղծելու: 27) կամ «հունական պետություն կամ սլավոնական շտամների ֆեդերատիվ հանրապետություն հիմնելու» (Մարքս) գազափարը: 28) Ըստ Ենգելսի՝ բալկանյան ժողովուրդների ազատագրումը պատմականորեն հասունացած խնդիր է արդեն: 29) Միայն թե նրա կարծիքով խնդրի այդ առաջադրությունը լինելու չե ցարական Ռուսաստանի դեմ պայքարող Յեվրոպայի «հեղափոխական դեմոկրատիայի» լողունը: 30) Թյուրքիայի ճնշված ազգությունների ինքնորոշման իրավունքը ինչպես Ենգելսը, նույնպես և Մարքսը ընդունում էյին կապակցելով այն միայն հեղափոխության ընդհանուր խնդրի՝ ցարիզմի — յեվրոպական ուսակցիայի այդ հենարանի — տապալման հետ: Պայքար Յեվրոպայի և Ասիայի «հակահեղափոխական կոլոսի»՝ ցարիզմի՝ դեմ — այս «հիմնական խնդրի» հետ էյին

կապուժ նրանք աղգային հարցի լուծումը  
թյուրքիայում:

Գ. Պոլիսը — գրում էր Մարքսը — այդ Արևելքի և Արև-  
մուտքի միջև կառուցված վոսկե կամուրջն է. առանց այդ  
կամուրջն անցնելու՝ արևմտյան քաղաքակրթությունը, ինչ-  
պես արեգակը, չի կարող պտույտ գալ աշխարհի շուրջը:  
Սակայն առանց Ռուսաստանի հետ ընդհարվելու՝ նա չի կա-  
րող անցնել այդ կամուրջը: «Հավասարակշռության սիս-  
տեմի» պահպանումը յեվրոպական պետությունների հեղա-  
փոխության հանդեպ ունեցած վախի արդյունքն է: Վ. Գ. Պո-  
լիսը — շարունակում է Մարքսը — միայն պահ է դրված սուլ-  
թանին վորպես գրավական հեղափոխության դիմաց, և Արև-  
մուտքի Յեվրոպայի ներկա նոմինալ իրավատերերը, վորոնք  
իրանց «իրավակարգի» հենարանը նեվայի ավերում են նշա-  
րում, այլևս անկարող են ուրիշ վորևս բան անել, քան թող-  
նել խնդիրը անորոշ դրություն մեջ, մինչև վոր Ռուսաստանը  
յերես առ յերես կլինի իր իսկական հակառակորդի — հեղա-  
փոխության — հետ: Այդ հեղափոխությունը, վորը կտապալի  
Արևմտյան Հռոմը, կհաղթահարի նաև Արևելյան Հռոմի դիվա-  
կան ազդեցությունը: Փաստ է, — հարում էր Ենգելսը, —  
վոր վերջ պետք է տալ թյուրքերի տիրապետությանը: Այնու-  
ամենայնիվ պնդել, թե այդ կարելի չէ անել միայն այն ճանա-  
պարհով, վոր նրանց փոխարինեն ռուսները կամ ավստրիա-  
ցիները — կնշանակեր պնդել նաև, թե Յեվրոպայի ներկա  
քաղաքական կացությունը պետք է վոր տևի միշտ ու հա-  
վիտյան: Ո՞վ է, վոր կարող է պնդել այդ:»<sup>32</sup> «Սակայն կա-  
ռավարություններն իրենց հնաձև դիվանագիտությունը ան-  
կարող պիտի լինեն լուծելու յերբևե ալդ զփարությունը:  
Ինչպես բազմաթիվ ուրիշ պրոբլեմներ լուծումը՝ թյուրքա-  
կանինը ևս վերապահված է մնում յեվրոպական հեղափոխու-  
թյան:»<sup>33</sup> «Միայն կոնտինենտալ հեղափոխությունը կարող  
է վերջ դնել այս բոլոր անպետքությանը: Ժամանակի ըն-  
թացքում նույնիսկ ամենից կատաղի ֆիլիստերները պիտի  
հասկանան, վոր առանց հեղափոխության վոչ մի հարց  
չպիտի վճռվի:»<sup>34</sup> Յեվ ընդհակառակը՝ այստեղից պարզ է  
նաև, վոր իր հերթին հեղափոխության կրած պարտու-

թյունն էր, կամ, համենայն դեպս, Յեվրոպայում մտքերի  
«խաղաղանալն» է, վոր պատմականորեն նախագուշակում  
էր միշտ «արևելյան խնդրի» աշխուժացումը. այսպես յեղել է  
գեթ ֆրանսիական առաջին հեղափոխությունից ի վեր:<sup>35</sup>

Հասկանալի չէ, վոր պայքարելով ցարիզմի նվաճողական  
քաղաքականության դեմ, պայքարելով այն վտանգի դեմ,  
ինչպիսին Կ. Պոլիսը գրավելու հեռանկարն էր՝ Մարքսի և  
Ենգելսի համակրանքը — Դրազմանովի խոսքերով ասենք —  
պիտի լիներ «արտաքին թյուրքի» կողմը և՛ «ներքին  
թյուրքի» դեմ:

«Պահպանել թյուրքիայի անկախությունը կամ ի չիք  
դարձնել Ռուսաստանի աննկատելի ստատական ծրագրերը, յեթե  
այնուամենայնիվ Ռուսոմանյան կայսրությունը կազմալուծ-  
վելու լինի — ահա գործնական այն պլանը, վորի սահման-  
ներում նրանք հնարավոր էյին համարում հեղափոխական  
կուսակցությունների համար դաշինք պայքարող թյուրքիայի  
հետ՝ ընդդեմ Ռուսաստանի:»<sup>36</sup> Մարքսի և Ենգելսի համար  
պարզված ճշմարտություն էր, վոր թյուրքիայի բաժանումը  
անհնարին բան կդառնա, յեթե չլինի ցարի և նրա կոնտրա-  
գենտների համաձայնությունը: «Առանց Ֆրանսիայի կամ  
Անգլիայի դաշնակցության՝ Ռուսաստանը անկարող է յերբ  
և՛ գլուխ բերել թյուրքիայի բաժանումը» — գրում է Են-  
գելսը 1859 թվին:<sup>37</sup> Այստեղից Մարքսն ու Ենգելսը անում  
էյին այն հետևությունը, վոր պետք է ձեռք մեկնել բոլոր  
այն ուժերին, վորոնք պայքարում են ռուս-անգլիական կամ  
ռուս-ֆրանսիական այս դաշինքի դեմ: Այստեղ էր նաև հե-  
ղափոխական Մարքսի և ռեակցիոներ քաղաքագետ Դ. Ուր-  
քարտի ու իր համախոհների — ինչպես՝ պրուսական ռեքար-  
տիստ Ֆիշելի և մյուսների «անձնական» մերձեցման գաղտ-  
նիքը: Համառոտ ինքնակենսագրության մեջ Մարքսը այս-  
պես էր բնորոշում իր վերաբերմունքը դեպի Ուրքարտը.  
«Յես ընթանում եմ նրա հետ նրա արտաքին քաղաքակա-  
նության (պայքար Ռուսաստանի և բոնապարտիզմի դեմ),  
բայց վոչ ներքին քաղաքականության մեջ, վորտեղ ընթա-  
նում եմ (նրան թշնամի) չարտիստական կուսակցության  
հետ:»<sup>37</sup> Ավելի ընդարձակ Մարքսը գրում էր իր վերաբեր-

մունքի մասին Լասսալին ուղղած մի նամակում: Այս նամակում, վորը գրի յե առնված 1860 թ. մայիսին Ենգելսի առաջարկած ռեյնկաուտի, Մարքսը մատնանշում եր դարձյալ վոր Ուրբարտը հետաքրքրում ե իրեն բացառապես վորպես դաշնակից Ռուսաստանի, Պալմերստոնի և Բոնապարտի դեմ մղվող պայքարում: Յերբ կոկիլ Ռուսաստանի դեմ ե՝ միևնույն և թե ինչ կոնկրետ մոտիվներով ե ղեկավարում ձեր գործակիցը սեկարմիր-դեղին թե՛ հեղափոխական: Կարևորն այն ե, վոր Ուրբարտը ուշ ե, վորից յերկյուղ ե կրում Ռուսաստանը: Քանի վոր հասկանալ յի ինքնըստինքյան, վոր արտաքին քաղաքականության մեջ այնպիսի փրագներով, ինչպես «ռեակցիոններ» կամ «հեղափոխական» հեռու գնալ չես կարող: Ուրբարտը, հարկավ, տարված ե ռոմանտիկ ժողովրդականք ե այդ իմաստով՝ սուբյեկտիվորեն սեակցիոններ ե. «այս չե խանդարում բնավ, վոր արտաքին քաղաքականության մեջ նրա գլխավորած շարժումը որչեփովորեն հեղափոխական լինի»:<sup>38</sup> Այս բնագավառում, գրում ե Մարքսը Ենգելսին, — կարելի յե ավելի մեծ «ափանակներից» ոգտվել քան Ֆիշերն ե, յեթե միայն նրանք հասկանում են բանի էությունը... Առհասարակ արտաքին քաղաքականության յուրատեսեսակ այս բնագավառում վերացականորեն շատ լավ կարելի յե նկատել նրա և ներքին քաղաքականության տարբերությունը... Ներկա դեպքում՝ այն ինչ ռեակցիոն ե սուբյեկտիվորեն՝ հեղափոխական ե որչեփովորեն արտաքին քաղաքականության մեջ»:<sup>39</sup>

#### IV

Ղրիմի պատերազմի նախորդին, մատնանշելով Բաթումը և Ղարսը գրավելու ռուսական հեռանկարները Ենգելսը տակավին իրական չեր համարում գրավման վտանգը: Բայց այն, ինչ անհնալ ին եր թվում այն ժամանակ, կատարված փաստ եր դարձել հետագայում, — 1877—78 թ.թ. ռուս-թուրքական պատերազմի շնորհիվ Պատերազմից առաջ Ռուսաստանի նոր առաջխաղացման վտանգը Մարքսի ու Ենգելսի համար հավասարակշռում եր միայն մի հանգամանքի — Ռուսաստանի ներսում հեղափոխական շարժման աճումի — հեռանկարով: «Շարժումը ճոր-

տերի ազատագրման ուղին, — գրում եր Մարքսը Ռուսաստանի մասին 1858 թվին — նշան ե, վոր յերկրում սկիզբ ե առել ներքին մի պատմություն, վորը խոչընդոտ կարող ե ստեղծել նրա արտաքին քաղաքականության առաջ»:<sup>40</sup> Հեղափոխական շարժումը, բայց Մարքսի, «ռուս դիպլոմատիայի 1849 թ. ծայր առնող անսովոր հաջողությունների» հակակշիռն եր կազմում:<sup>41</sup> Իր հերթին այն արագ ընթացք եր ստանում 1854—1855 թ.թ. Ռուսաստանի կրած պարտություն հետևանքով:<sup>42</sup> «Ռուսական դիպլոմատիայի հաջողության գաղտնիքը արտասահմանում՝ Ռուսաստանի ներսում տիրող գերեզմանային անդորրությունն եր — գրում ե Մարքսը 1879 թվին: Յերկրի ներսում շարժում սկսվելուց հետո՝ փարատվել ե նաև նրա կախարդության գաղտնիքը Նրա վերջին հաղթությունը յեղավ Պարիզի 1856 թվի դաշնագրությունը: Դրանից հետո սխալներ ե, վոր տեղի յեն ունենում»:<sup>43</sup> «Այն որից — գրում ե դարձյալ Մարքսը — ինչ ռուսական դիպլոմատիան հարկադրված ե հաշվի առնել ռուսական ներքին դեպքերը — նա անհաջողություններ ե կրում... Բայց ավելի լավ կլիներ, յեթե Ռուսաստանի ներսում գործն ավելի արագ մոտենալու լիներ իր վախճանին. այդ դեպքում պատերազմի վտանգը կվերանար ներքին հեղաշրջման շնորհիվ»:<sup>44</sup> «Կոմունիստական Մանիֆեստի» ռուս հրատարակության առաջաքանում, համեմատելով Ռուսաստանի դերը անցյալում և հիմա, հեղինակները գրում եյին 1882 թվին՝ «1848—49 թ.թ. հեղափոխության ժամանակ վոչ միայն յեվրոպական իշխանները, այլև յեվրոպական բուրժուազիան Ռուսաստանի միջամտությունը փրկության միակ խարխիսն եյին համարում նոր արթնացած պրոլետարիատի դիմաց: Ցարը յեվրոպական ռեակցիայի գլուխ հայտարարվեց: Հիմա նա նստած ե Գատչինայում վորպես հեղափոխության գերի, և Ռուսաստանը ներկայանում ե վորպես Յեվրոպայի հեղափոխական շարժման ավանգարդ»:

Այստեղից պարզ պետք ե լինի նաև Մարքսի ու Ենգելսի վերաբերմունքը դեպի Թյուրքիայի ազդությանց «ազատագրման» պատրվակով ձեռնարկված պատերազմի նոր այն «տուրը», վոր ծայր առավ 1876 թվին — Բալկաններում

արծարծված ապստամբությունների ժամանակ: Ենգելսը իր  
ուրախությունն եր հայտնում սերբերի ապստամբական ծրա-  
գիրները անհաջողության մատնվելու առիթով: Վրանով, կար-  
ծում եր նա, փուլ են գալու նաև ուսական ծրագիրները:<sup>45</sup>  
Մի այլ տեղ նա ձևակերպում է այն կարծիքը, թե անգլիա-  
կան լիբերալների վայնասունները «թյուրքական գաղանու-  
թյուններն» մասին անգնահատելի ծառայություն են մա-  
տուցանում ուսանելին, և հող պատրաստում նրանց առաջիկա  
արշավանքի համար:<sup>46</sup> Ենգելսին, ինչպես նաև Մարքսին,  
մտահոգում եր այն միտքը, թե ուսանելի հաջողություն-  
ները կարող են վերին աստիճանի աննպաստ կացություն  
ստեղծել ուսական և, վերջին հաշվով, համայնվրոպական  
հեղափոխության համար: Բնորոշ է, վոր 1877—78 թ.թ. պա-  
տերազմի ժամանակ Ռուսաստանի հաջողությունները Բալ-  
կաններում Մարքսը վորակում էր վորպես թյուրք սահմա-  
նադրականների պարտություն, և ընդհակառակը՝ Ռուսաս-  
տանի պարտությունը Հայաստանում, նպաստավոր մոժեշտ  
նկատում ուս հեղափոխության զարգացման համար:<sup>47</sup> Ռու-  
սաստանի ռազմական պարտությունը Ենգելսը նկատում եր  
զորավոր գործոն, վորը կարող է արագացնել հեղափոխու-  
թյան զարգացումը Ռուսաստանում: Յեվ ընդհակառակը, հա-  
ջող պատերազմը թ ուրքիայի կամ Ավստրիայի հետ կարող եր  
միայն դանդաղեցնել Ռուսաստանի հեղափոխությունը:<sup>48</sup> Պա-  
տերազմի սկզբին, — ինչպես հաղորդում եր Ջորգեյին ուղղած  
նամակում Ժեննի Մարքսը, Մարքսը պարծենում եր «Մահ-  
մեդի զավակների արժանավոր ընթացքով՝ քրիստոնեական  
շառլատանություն (առևտրականների գարշելի յերեսպաշտու-  
թյան) դեմ»:<sup>49</sup> «Մենք վճռականապես թյուրքերի կողմն ենք —  
զրում եր Մարքսը Լիբկնեխտին իր և Ենգելսի անունից, —  
և այս յերկու պատճառով: 1) վորովհետև մենք ուսումնասիրել  
ենք թյուրք գյուղացու, այսինքն թյուրք ժողովրդա-  
կան մասսան, և համոզվել ենք, վոր անպայման այն Յեվ-  
րոպայի գյուղացիության ամենից առողջ ներկայացուցիչնե-  
րից մեկն է: 2) վորովհետև, ուսանելի պարտություն-  
նը շատ կարագացնի Ռուսաստանի սոցիալա-  
կան հեղաշրջումը, — այդ մասին ահագին քանակու-

թյամբ տվյալներ կան, — վորի հետևանքով շրջադարձու-  
թյուն կսկսվի ամբողջ Յեվրոպայում»:<sup>50</sup> «Քաջամարտ թյուր-  
քերը տարիներով արագացրել են պայթումը, շնորհիվ այն  
հարվածի, վոր նրանք միանգամայն տեղին հասցրին վոչ  
միայն ուս րանակին և ուս ֆինանսներին, այլ և զորա-  
վարող դինաստիային (ցարը, թագաժառանգը և ուրիշ վեց  
հոգի Ռոմանովներից): Հեղաշրջումը secundum artem կսկսվի  
սահմանադրական թատերախաղով և լավ աղմուկ կլինի:  
Յեթե մեզ համար յեղանակը չափազանց անբարենաջող չլինի՝  
մենք դեռ կտեսնենք հաղթությունը»:<sup>51</sup>

Թյուրք բանակի պարտությունը չարդարացրեց այս սպա-  
սումները: Ջուր չե, վոր Ենգելսին այնքան անհանգստացնում  
էին ուսանելի հետագա հաղթությունները — ինչպես Հա-  
յաստանում, նույնպես և Բալկաններում:<sup>52</sup> Ճիշտ է Բեռլինի  
դաշնադրությունը հնարավորություն չտվեց Ռուսաստանին  
հաղթանակող կողմ համարելու իրեն նաև դիպլոմատիական  
ասպարիզում: Բայց և այնպես, հետագայում ևս նա շարու-  
նակեց ոգտագործել յեվրոպական պետությունների հակա-  
մարտությունները: «Ռուսների բազմաթիվ ու խոշոր մանյովը-  
ները թյուրքիայում, Պարսկաստանում, Աֆղանիստանում և  
այլն, — գրում եր Ենգելսը 1878 թ. սեպտեմբերին — ըստ  
յերևույթին նպատակ ունին մի կողմից պղտոր ջրում ձուկ  
կարթելու, հույս դնելով հաջող վորսի վրա, մյուս կողմից, —  
մոլորություն մեջ ձգելու յերկրի ներսում հասարակական  
կարծիքը»:<sup>53</sup> Այս տողերի առիթով գրած պատասխանի մեջ  
Մարքսը նկատում եր. «Ռուսական շախմատախաղը Աֆղա-  
նիստանում, ինչպես նաև թյուրքիայի դեպքերը — այս բո-  
լորը հետաքրքրում է ինձ հիմա միայն այնչափ, վորչափ  
ad hominem ապացույց է ծառայում յեվրոպական պետա-  
կան իմաստություն: Առհասարակ ինձ համար կասկածից  
զուրս է մի բան. ինչ ել անելու չլինեն into the bargain  
Ռուսաստանն ու Պրուսիան համաշխարհային թատերաբեմի  
վրա, ամեն ինչ անխուսափորեն միայն վատ հետևանք-  
ներ պիտի ունենա նրանց ռեժիմի համար և վոչ մի կերպ  
չի կարող կասեցնել վերջինիս անկումը, այլ միայն կարա-  
գացնի նրա սարսափելի անկումը»:<sup>54</sup>

հայտնաբերված

Ռուսաստանին ու պանսլավիստներին շահագրգռող խնդրի լուծումը՝ Կ. Պոլսի գրավումը, — գրում էր փոքր ինչ ուշ Ենգելսը, — «խիստ կազդեր ունեցող պոռնական տրագիկանները վրա, կներշնչեր նրան Յարգրադը պաշտպանելու մտայնություն ու շունչ առնելու նոր միջոց կտար ցարիզմին: Իսկվյեթի ուսանելը տեղի դառնալու լինին Կ. Պոլսին — այն ժամանակ միայն բարե նաև Բուլղարիայի ու Սերբիայի անկախություն ու ազատություն, — բրատովկաները շատ շուտ պիտի գգային, վորքան ավելի լավ էր նրանց դրությունն անգամ թյուրքական լծի տակ»»<sup>55</sup>)

Քայքայ խոսելով թյուրքիայի «քրիստոնիս» ժողովուրդներին մասին և՛ Մարքսը և՛ Ենգելսը հաշվի եյին առնում վոչ միայն ուսու, այլ նաև թուրք հեղափոխության հեռանկարը: Մասնա Մարքսի՝ Միդհատի գլխավորած շարժումից երկարված վոչ միայն թյուրքիայի ճակատագիրը, այլև՝ Ռուսաստանի «գարգացման» անմիջական հեռանկարները: Ուստի և զարմանալի չէ, վոր մոսկովյան դիվանագիտությունը ավելի մեծ ուշադրություն էր հետևում Կ. Պոլսում տեղի ունեցող մանյովրներին, քան այն մանյովրներին, վոր տեղի եյին ունենում Բալկաններում:<sup>56</sup>

Մարքսի՝ Լիբլենիտին ուղղած այն նամակում, վոր հիշատակեցինք վերը, թվարկվում են ընդհանուր քաղաքական այն պատճառները, վորոնք պայմանավորել եյին թյուրքիայի պարտությունը և նպաստել Ռուսաստանի հաղթանակին: Մատնանշելով այդ պատճառները — Անգլիայի ու Սվաբիայի դավաճանությունը, Բիսմարկի՝ Ռուսաստանին մատուցած ծառայությունը և այլն, Վ Մարքսը թյուրքերի պարտության գլխավոր պատճառներից մեկը համարում էր այն, վոր նրանք ձեռքից բաց եյին թողել Կ. Պոլսում հեղափոխություն կատարելու մոմենտը: Վերած ե այն ժողովուրդը, վորը գերագույն ճգնաժամի նման վայրկյաններին չի կարողանում հեղափոխականորեն ասպարեղ գալ: Ռուս կառավարությունը գիտեր թե ինչ արժեք ունի իր համար Դամասոք, ուսու կառավարությունն ավելի շատ ստրատեգիա ու տակտիկա չէ բանեցրել Միդհատ փաշային Կ. Պոլսից հեռացնելու վրա, վորպեսզի Դամասոքն կառավարություն գլուխ թողնի,

քան Պլեխան ասնելու վրա»<sup>57</sup> Նման մտքեր եր արտահայտում 1878 թ. սեպտ. նաև Ենգելսը Մարքսին գրած նամակում: «Հիմա ամենահարմար ժամանակն է, վորպեսզի Կ. Պոլսում վորեւե փոփոխություն լինի, — այլապես զավառում տեղ՝ ունեցող բաղձաթիվ ապստամբությունները կստեղծեն այնպիսի մի կացություն, վոր քայքայման դուրը կհասցնի Յեվրոպական թյուրքիային: Այդ կացությունից կառաջանա այն, ինչ կամենում են ուսանելու ու Բիսմարկը, վորպեսզի անկատար թողնեն Բեռլինի պայմանագիրը և ձուկ վորսան պղտոր ջրում: Միդհատի վերադարձը կրետա և նրա կողմից ձեռնարկված համարձակ մի յեղոյթ կարող եր այլ ընթացք տալ գործին: Յեթե ներկա դրությունը անփոփոխ մնա, ուսանելն այնտեղ կմնան և ձեռք կբերեն ավար ստանալու նոր շանսեր, հանգամանք, վոր իր հերթին Ռուսաստանի ներսում ևս պատնեշ կդնի իրերի բնական ընթացքի առաջ»<sup>58</sup> Հետագայում, 1882 թվին, հույս դնելով ուսու հեղափոխության մոտավոր հաղթության վրա, Ենգելսը կարծում էր նույնիսկ, վոր բավական են հենց միայն վարչական-ֆինանսական ռեֆորմներ Բալկաններում, վորպեսզի վերջ դրվեն ցարիզմի հավանություններին բողաբների վերաբերմամբ: Յեթե վոր թյուրքերը ավելի փորձված լինեյին, — դրում էր նա, — և տալու լինեյին նրանց (բողաբներին) ավելի ինքնավարություն ու բարեկու լինեյին նրանց վրա ավելի քիչ հարկեր, քան ինչ վոր նրանք հիմա ունին, այն ժամանակ կչքանար վողջ բողաբական հարցը»<sup>59</sup>

Թյուրքական պրոլետի մարքսիստական վերլուծումը, թյուրք հեղափոխության մարքսիստական ըմբռնումը չեր հանդուրժում մեկուսացած վերաբերմունք դեպի թյուրքիայում բնակվող ժողովուրդների ազգային շարժումները: Վորեւե յերկրի տնտեսության խնդիրները, այդ յերկրի, Սթաբեկյանի նամակում նշված՝ «հանուն ավելի բարձր կուլտուրայի» և «քաղաքակրթության» վարած զսպարկային պայքարը կոնկրետ իմաստ են ստանում միայն ընդհանուր քաղաքական այն շրջանակներում, վորտեղ նրանք ծագում են ու լուծումն փնտրում: Ազգային հեղափոխական շարժումը բուրժուական հեղափոխության առանձին տեսակն է միայն:

վերջին հաշվով այն կարևորութիւն ունի պրոլետարիատի համար այնչափ միայն, վորչափ նպաստում է նրա համադասակարգային խնդիրների վճռմանը: Յեւ յեթե այդ խնդիրների տեսակետից այն, ինչ սուրյեկտիվորեն ռեակցիոն է ներքին քաղաքականութեան մեջ, կարող է որչեկտիվորեն հեղափոխական իմաստ ստանալ արտաքին քաղաքականութեան մեջ, ապա նաև ընդհակառակը, այն ինչ սուրյեկտիվորեն հեղափոխական է ներքին քաղաքականութեան բնագավառում հայտնի դեպքերում կարող է որչեկտիվորեն ռեակցիոն լինել արտաքին քաղաքականութեան շրջանում: Մարքսիստական մերձեցման համար պահանջվում է համաշխարհային կացութեան կոնկրետ ըմբռնում նվաճել և առանձին յերևույթների ընդհանուր արժեքավորումը կատարել միջազգային պրոլետարիատի և միջազգային հեղափոխական շարժման տեսակետից: Մասնավորապես արևելյան հարցի լուծումը Ղրիմի պատերազմի ժամանակ Մարքսի ու Ենգելսի համար, ինչպես տեսանք, կազմում էյին համայնվորդական բուրժուական-դեմոկրատական՝ հեղափոխութեան մի մասը: Ավելի ուշ — Պարիզի կոմունայից հետո — արևելյան հարցը նրանք շաղկապում էյին պրոլետարիատի միջազգային հաղթութեան հեռանկարների հետ: Հայտնի յե, վոր «Կոմունիստական Մանիֆեստի» հեղինակներն այլ և այլ ազգութեանց պրոլետարների շարժման մեջ առաջ էյին քաշում ամբողջ պրոլետարիատի ընդհանուր ազգութեանից անկախ, շահերը և պրոլետարիատի կովի տարբեր աստիճանների վրա պաշտպանում ընդհանուր շարժման ամբողջական շահը միայն: — Ճիշտ այդպես էլ նաև տարբեր յերկրների ու ժամանակների ազգային-հեղափոխական շարժման մեջ նրանք առաջ էյին քաշում ու պաշտպանում միայն այն, ինչ շաղկապում էր այդ շարժումը պրոլետարիատի ընդհանուր շահերի ու նրա բովանդակ պայքարի հետ: Լիբերալ «սիմպատիան» դեպի «ճնշված ազգութիւնը» վորպես այդպիսին խորթ է մարքսիզմին: «Սկզբներում մենք ամենքս, վորչափ նախապես մենք դուրս ենք յեկել լիբերալիզմի կամ ռադիկալիզմի միջից՝ բերել ենք մեզ հետ այդ սիմպատիաները դեպի բոլոր «ճնշված» ազգութիւնները, և յես գիտեմ, թե վորքան ժամանակ ու գի-

տական աշխատանք եմ սպառել անձնապես ինքս՝ դրանցից վերջնապես ազատվելու համար»:<sup>60</sup> Այսպես էր գրում Ենգելսը 1882 թ. Բերնշտեյնին գրած նամակում, իրանգամանք, վոր, իհարկե, չխանգարեց վերջինիս քսան տարի անց ավետարանից քաղած ցիտատներով համեմատ ճառեր արտասանել հայ ժողովուրդի «տանջանքների» մասին՝ կոչ անելով Բյուլովի կառավարութեանը — իր պաշտպանութեան տակ առնել խեղճ հայերին, որինակ վերցնելով թեկուզ ցարից՝ «Արևելքի ժողովուրդների ազատարարից»:<sup>61</sup> Յեւ կարծես հենց կանխելով Աթաբեկյանի նամակին ուղղելիք պատասխանը, վորտեղ վերջինս մանրամասնում էր Հայաստանի հին պատմութեան «վոսկե դարի» մասին, «վոսկե դարի», վորը հայերի «բարձր կուլտուրայի» մասին վկայող դրական հիշատակներ է թողել, ու կարծես հենց միաժամանակ ծաղրելու համար նրանց, ովքեր համաշխարհային պատերազմի ժամանակ ձեռնարկեցին միջնադարյան Հայաստանի բանաստեղծութեան ռեստավրացիային՝ հրամցնելով այն ցարին ու ռուս բուրժուազիային վորպես հայերի պատմական «աղնիկութեան» պատենտ ու համոզիչ արգումենտ նրանց ազատագրման ոգտին, Ենգելսը գրում էր Բերնշտեյնին ուղղած նույն նամակում, աչքի առաջ ունենալով սերբերին. «Սիմպատիաներ ունեցեք ինչքան կուզեք դեպի նախակենցաղ այդ ժողովուրդները, — բանաստեղծական վորոշ տաղանդից, նրանք, հարկավ դուրկ չեն, նրանք դեռևս յերգեր են հորինում միանգամայն հին-սերբականների վոճով (իսկ վերջիններս գեղեցիկ են, — վորպես ապացույց յես ձեզ կուղարկեմ „Standard“-ի մի հոդվածը): Բայց նրանք այնուամենայնիվ ցարիզմի գործակիցներն են, իսկ վերջինիս քաղաքական հաշիվների մեջ բանաստեղծական սիմպատիաներ չեն մտնում: Իսկ յեթե այդ պարոնների ապստամբութիւնը չեն մտնում, իսկ յեթե այդ պարոնների ապստամբութիւնը չեն մտնում, և համաշխարհային պատերազմի վերածվել, պատերազմի, վորը դեռ մեր գործերին էլ պիտի ֆլասի, այդ դեպքում նրանք ու թալանով զբաղվելու նրանց իրավունքը չառանց վորեւ խնայողութեան պիտի դոհ բերվեն յեվրոպական պրոլետարիատի շահերին»:<sup>62</sup> Բերնշտեյնը, — ինչպես հետագայում նաև Կուուցկին,<sup>63</sup> — մատնանշում էր, վոր իբր

սլավոնական ժողովուրդները հրաժարվում են արդեն պան-սլավիզմի հետ կապված յերբեմնի իլյուզյաններից, և վոր ինքը պանսլավիզմը արդեն իսկ հրաժարվում է Թյուրքիայի ճնշված ազգությունները «ազատագրողը» միսիայից: Սրան ի պատասխան Ենգելսը հիշեցնում էր, վոր՝ սլավոնական վիճակի վտանգը՝ վորչափ զոյություն ունի այդ վտանգը, Վիտի փնտրել վոչ թե պերիֆերիայում, վոչ թե Թյուրքիայում ճնշված «քրիստոնիս» ժողովուրդների մեջ՝ այլ կենտրոնում, 80 միլիոն ստրուկների մեջ, վորոնցից ցարիզմը միջոցներ է առնում նվաճողական իր նպատակներն իրագործելու համար: Սրիցք հրաժարվել են յերբեմնի իլյուզիաններից ճնշվածներն իրանք: Ենգելսը կասկածում էր այդ, — և նրա կասկածները արդարացան հետագայում, վոչ միայն բալկանյան ժողովուրդներին, այլ և Հայաստանի վերաբերմամբ, այն տարբերությամբ միայն, վոր ցարիզմի «ազատարար» դերը նոր հանգամանքներում, համաշխարհային պատերազմի ժամանակ, անցել էր արդեն յեվրոպական բովանդակ իմպերիալիզմին:

Յենթե պատերազմ լինի — մարզարեորեն կանխատեսում էր Ենգելսը, Ռուսը այդ շահագրգռված մանր ազգությունները լինելու յեն ցարիզմի, քաղաքացիորեն զարգացած վոյժ Սրեմուտքի այդ թշնամու, կոդմը: Քանի վոր դա այդպես է՝ ինչ չի կարող հետաքրքրել նրանց անմիջական ազատագրումը: Նրանք մեր անմիջական թշամիներն են, այնպես ինչպես նաև նրանց դաշնակիցն ու թևարկողը — ցարը: յիալիք «ազատարար» պատերազմը, ձեռնարկվելով հանուն մանր ազգությունների «փրկության», կստեղծեր, ըստ Ենգելսի, ուղղակի սպառնալիք ինչպես Ռուսաստանի հեղափոխական շարժմանը, նույնպես և արևմտյան պրոլետարիատի շարժմանը: Սյատեղից պարզ է նաև նրա դիրքը Թյուրքիայի «քրիստոնիս» ժողովուրդների ազատագրման հարցում:

Վորքան էլ հետաքրքիր չլինեն բալկանյան սլավոնները և այլն, — գրում էր Ենգելսը, — յենթե միայն նրանց ազատագրվելու ձգտումը ընդհարվում է պրոլետարիատի շահի հետ, ապա նրանցով ես քիչ եմ հետաքրքրվում: Միայն

պրոլետարիատի հաղթությունն է, վոր կազատագրի Թյուրքիայի ազգություններին՝ իրապես և անհրաժեշտորեն և վոչ առերես ու ժամանակավորապես, ինչպես ցարը»: 84

Իսկ քանի դեռ չի հասել դրա ժամանակը, քանի դեռ ճնշված ազգությունները Բալկաններում, Հայաստանում և վորտեղ էլ նրանք չգտնվեն ուղղակի թե անուղղակի միայն ցարիզմի առաջխաղացմանն են ոժանդակում, վոչ այդ ժողովուրդների անցյալ ծառայությունները, վոչ էլ նրանց ապագա զարգացման հեռանկարները չեն կարող մեջ բերվել վորպես արգումենտ նրանց ոգտին: Նման առիթով Ենգելսը տակավին 1848 թվին է գրել թե՛ «Հիմա մենք գիտենք, թե վորտեղ են համակենտրոնացած հեղափոխության թշնամիները. — Ռուսաստանում և Սլավոնիայի սլավոնական յերկրամասերում, և այդ յերկրների անորոշ դեմոկրատական ապագայի վոչ մի մատնանշում ու վոչ մի ֆրազ չեն կարող արգելք լինել մեզ վերաբերվելու մեր թշնամիներին՝ վորպես թշնամիներ»: 85

Նույն Բերնշտեյնին հասցեագրված մի ուրիշ նամակում Ենգելսը, խոսելով յեգիպտական ֆեյլահների մասին, նախատում էր Ցյուրիխի «Սոցիալ-դեմոկրատ»-ին այն բանում, վոր նա շատ է իր պաշտպանության տակ առնում այսպես կոչված ազգային կուսակցությունը, վորին գլխավորում էր ֆեյլահների «հերոսը» — Սրարին: Յեվ կարծես հենց ֆրանսիական սոցիալիստների հայասիրական հետագա վայնասունները բնորոշելու համար՝ Ենգելսը գրում էր այս առիթով. «Մենք, Սրեմոտյան Յեվրոպայի սոցիալիստներս չպետք է այնքան դյուրին կերպով կարթ ընկնենք, ինչպես բոլոր յեգիպտական ֆեյլահները և բոլոր ռոմանական ժողովուրդները: Տարորինակ է, բոլոր ռոմանական սոցիալիստները գոռում են, թե իրենք հեղափոխություն են անում ի սերուրիշների. շատ պարզ է, քանի վոր իրենք «հեղափոխություն» ֆրազն են կրկնել միշտ: Յեվ այնուամենայնիվ բավական է վոր վորեւ տեղ մի խոսվություն սկսվի, վորպեսզի բոլոր հեղափոխական ռոմանական ժողովուրդները անքննադատորեն տարվեն նրանով: Իմ կարծիքով, մենք շատ լավ էլ կարող ենք յեւլոյթ ունենալ ճնշված ֆեյլահների ոգտին, չբաժանելով նրանց բուպեական իլյուզիաները

Վրացի վորժողացիներից բաղկացած ժողովուրդը, սովորաբար բաղձաթիվ դարերի ընթացքում յենթարկվում ե պատրանքի, մինչև վոր, վերջ ի վերջո, վորձը խելքի յե բերում նրան) և անգլիացիների դեմ, չհամերաշխելով միաժամանակ նաև նրանց պատերազմական հակառակորդների հետ։ Միջազգային քաղաքականությունը բոլոր խնդիրներում պետք ե ծայրահեղ անվստահություններ վերաբերվել դեպի սանտիմենտալ-քաղաքական ֆրանսիական և իտալական լրագիրները. բայց մենք, գերմանացիներս, պարտավոր ենք քննադատություններ ամրացնել տեսական այն առավելությունները, վոր մենք ձեռք ենք բերել արդեն այս բնագավառում»<sup>66</sup>

Սպառնիչ կերպով Ենգելսը պարզաբանել ե իր տեսակետը բալկանյան ժողովուրդների ազգային շարժման վերաբերմամբ հարավային սլավոնների կոնկրետ որինակով։ Բերնշտեյնին գրած 1886 թ. հոկտեմբերի 9 թվակիր նամակում Ենգելսը անում եր նրան պարզ ցուցմունքներ, վորոնք mutatis mutandis կարող են կիրառվել նաև հայկական շարժման նկատմամբ։ Ենգելսը գրում եր. 1) «Հաշվի առնելով իրերի ներկա կացությունը, իմ կարծիքով հարկավոր ե ոժանդակել հարավային սլավոններին, վորչափ նրանք Ռուսաստանի դեմ են, քանի վոր այդ դեպքում նրանք ընթանում են ձեռք ձեռքի տված յեվրոպական հեղափոխական շարժման հետ. 2) իսկ յեթե նրանք ընթանան թյուրքերի դեմ, այսինքն պահանջեն à tout prix անսկսիայի յենթարկելու տակավին թյուրքերի տիրապետության ներքո մնացած սակավաթիվ սերբերին և բոլղարներին, այդ դեպքում նրանք, գիտակցորեն թե անգիտակցորեն, դրստում են միայն Ռուսաստանի գործը, և մենք չենք կարող նրանց հետ միասին ընթանալ։ Այդ հնարավոր կլինե՞ր միայն յեվրոպական պատերազմ առաջացնելու ռիսկի գնով, մի բան, վոր թանգ կնստեր մեզ. ուստի և այդ պարոնները պիտի սպասեն, ճիշտ այնպես, ինչպես ելզացիները, լոտարինգացիները, տրիենտցիները և այլն։ Բացի դրանից, Վյուրաքանչյուր նոր հարձակում թյուրքերի վրա ներկա հանգամանքներում միայն այն արդյունքը կունենա, վոր հաղթանակող մանր ժողովուրդները իսկ հաղթանակել կարող կլինեյին նրանք միայն ռուսների ոգ-

նությամբ, — Վրամ ուղղակի ռուսների լծի տակ կընկնեյին և կամ ել, — տես թերակողու սահմաններում տարածված լեզուների քարկտեղը, — անհուսորեն իրար միս կուտեյին. 3) բայց հենց վոր հեղափոխություն բռնկի Ռուսաստանում, այդ պարոնները կարող են անել ինչ վոր կամենում են։ Սակայն հենց այն ժամանակ ել կտեսնեն, վոր թյուրքերի հախից գալ չեն կարող»<sup>67</sup>

## V

Ըստ յերևույթին Ենգելսի՝ Աթաբեկյանին ուղղած նամակը նրա վերջին ասույթն եր Մերձավոր Արևելքի ազգային շարժումների մասին։ Ենգելսը գտնում եր, վոր այս դեպքում «խոսքը ձև շված մի ժողովրդի մասին ե, վորը դժբախտություն ունի սեպ կազմելու թյուրքական բռնակալության Սցիլլայի և ռուս բռնակալության Սարիբդայի արանքում»։ Բայց միաժամանակ նա շտապում եր ընդգծել կացության ընդհանուր հեղափոխական գնահատման տեսակետից կարևոր այն հանգամանքը, վոր հայերի նկատմամբ ռուս ցարիզմը ուղում ե իրր թե աղատագրողի դեր կատարել, իսկ ստրկամիտ ռուսական մամուլն առիթ չի փախցնում հայկական աղատագրությունը համակիր ամեն մի խոսք շահագործելու նվաճողական ցարիզմի ոգտին»<sup>68</sup>

Ենգելսի տեսակետը նմանորինակ դեպքերում մեզ հայտնի յե արդեն։ Նույն տեսակետը վորոշակի հայտնաբերված ե նաև Աթաբեկյանին տված պատասխանի մեջ. — «Հայաստանի աղատագրումը թյուրքերից յեվ (այս «յեմի» ընգծում ե ինքը Ենգելսը) ռուսներից հնարավոր կդառնա միայն այն որը, յերը կտապալվի ռուսական ցարիզմը»<sup>69</sup>

Համառոտ իր պատասխանի մեջ Ենգելսը հարկավոր չեր համարում ծանրանալ հայերի քաղաքական տրամադրությունների գնահատության վրա. նա կանգ չեր առնում նաև քաղաքական այն կացության բնույթագրի վրա, վորով պայմանավորվել եր հայկական հարցի առաջադրումը 1878 թ. Բեռլինի գաղապարությունից հետո։ Սակայն իր ժամանակին բավականաչափ վորոշակի Ենգելսն արել եր և այդ բնույթագրությունը։

Բեռլինի դաշնադրությունից հետո հայկական հարցը առաջին անգամ, հրապարակ եր քաշվել 80-ական թ.թ. սկզբներին: Հարցի առաջադրման խնդիրն էր պատկանում եր Անգլիային և Նիդերլանդներին համար սկզբից և յետ պարզ եր անգլիական «հայասիրության» և Յեզյուիտներ յուրացնելու անգլիական քաղաքականության միջև յեղած կապը: Ահա թե ինչ եր գրում այդ առթիվ Նիդերլանդ 1882 թ. սեպտեմբերի 12-ին Կառլսրուե ռեզոլյուցիոն նամակում. «Յեզյուիտներ պատմությունը ուսական դիպլոմատիայի գործն ե: Գլադստոնը պետք ե վերցնի Յեզյուիտները (վորն իր ձեռքում ունենալուց նա դեռ շատ հեռու չե, իսկ յետ իր ձեռքում ունենալու իսկ չ'նեղ' դեռ շատ հեռու պիտի լինեք պահել կարենալուց) այն պայմանով, վոր Ռուսաստանը վերցնի Հայաստանը և իհարկե, Գլադստոնը դարձյալ առիթ չի փախցնի քրիստոնեական մի յերկրի մահմեդական լծից ազատագրում հայտարարելու այս: Սրանից զատ ամեն ինչ այս պատմության մեջ — առերես բան ե, ստույգութուն, պատրվակ: Կհաջողվի՞ արդյոք թեական այս ծրագիրը — այդ կպարզվի շուտով»: <sup>70</sup> Ավելի ընդարձակորեն Նիդերլանդ անդրադառնում ե այս խնդրին նույն օրը՝ Մարքսին գրած նամակում. «Ինչպես ավելի յե պարզվում՝ յեզյուիտական պատմությունը սկսվել ե ուս դիպլոմատիայի աջակցությամբ... Անգլիան պետք ե վոր խաղաղ ժամանակ գրավի Յեզյուիտները, վորպեսզի խեղճ Ռուսաստանն ել սրա շնորհիվ հարկադրված լինի ինքնապաշտպանության համար, նույնպես խաղաղ ժամանակ, գրավել Հայաստանը: Կովկասյան բանակը մոտեցրված ե արդեն սահմանագծին: Միայն հենց Ղարսի մոտ 48 բառայիտն կ'պատերազմի համար լիովին պատրաստ վիճակում: Յեկ ապացուցելու համար, վոր Գլադստոնը պատրաստ ե դարձյալ «քրիստոնիս» մի յերկիր ազատելու unspeakable Turk-ի (անտանելի թյուրքի Ա. Հ.) ձեռքից, հենց հիմա յե, վոր դեմոնստրատիվ կերպով յետ են կանչվում Բեռլինի կոնգրեսից հետո ռեֆորմներ մտցնելու համար Փոքր Ասիա ուղարկված անգլիական կոմիսարները: Հրատարակվում են նրանց զեկուցազրերը, վորոնցից յերևում ե, վոր թյուրքերը նրանց հիմարների տեղ են դնում, վոր ամեն ինչ թողնվել ե առաջվա պես, պաշտոնյաների կաշառակերությունը չի կարող արմա-

տախիլ արվել: Պալմերստոն est mort, vive Գլադստոն! Կեցցե Գլադստոն, վորը նույնպես հաճույքով կամրացներ ուսական դաշինքը Յեզյուիտներ: Դժբախտաբար, հին լավ ժամանակներն անցել են, և Ռուսաստանը այլևս կանգնած ե վոչ թե ուս դիպլոմատիայի յետևը, այլ՝ նրա դեմ»: <sup>71</sup>

Պատասխանի գրության մեջ՝ Մարքսը ուշադրություն եր դարձնում անգլո-ուս համաձայնության մի այլ վերավոր կետի վրա: «Մարքսի հայկական հարցի լուծումը ցարիզմի միջոցով դեմ ե առնում վոչ միայն ուս հեղափոխության աճող վտանգին, ինչպես ակնարկում եր Նիդերլանդ մեր բերած հատվածի վերջում, այլև՝ համաշխարհային պատերազմի հեռանկարին»: «Ռուսների հետ կնքված գործարքն ունի պակասավոր մի կողմ — գրում եր Մարքսը: Հնարավոր բան ե, վոր Վիսմարկը հաճույքով թույլ եր տվել վերջիններիս սկսելու խաղը: Բայց հետո հարկ կառաջանա սփոխել Ավստրիային և վարձահատույց լինել պրուսական իպերիային: Նշանակում ե՞ ուսների մուտքը Հայաստան կարող ե հանգել ընդհանուր պատերազմի՞ և սա, հավանական ե, համապատասխանում ե հենց Բիսմարկի ցանկություններին»: <sup>72</sup> Վերջին յենթադրությունը բխում եր անմիջորեն 70-ական թ.թ. վերջերից ի վեր Մարքսի ու Նիդերլանդ արտահայտած քաղաքական զեկավարող մտքից. Բիսմարկի արտաքին քաղաքականությունը, նրանց կարծիքով, պայքարի զենք ե հեղափոխության ներքին վտանգի դեմ: <sup>73</sup> Դերմանիայի ներսում աճող հեղափոխության վտանգն եր հենց, վոր տակավին ուս-տաճական պատերազմի ժամանակ ցարիզմի գիրկը նետեց Բիսմարկին. «Թուրքերի պարտությունը ուրախացնում ե Բիսմարկին, վորովհետեւ դա յերաշխիք ե Ռուսաստանի հեղափոխության դեմ, վորը վտանգավոր ե Հոհենցոլլերների համար» — գրում եր Մարքսը Զորգելին: <sup>74</sup> Յեղ կարող եր մատակարարել այս դրությունից միայն արտաքին պատերազմ — նոր ֆրանկո-գերման մի պատերազմ, վորը — ինչպես գրում եր Նիդերլանդ գերման մի պատերազմ, վորը — ինչպես գրում եր Նիդերլանդ պիտի դառնար «Արևելքի պատերազմ Արևմուտքի հետ»: <sup>75</sup>

1889 թվի սեպտեմբերի 17-ին Զորգելին գրած նամակում Նիդերլանդ անդրադառնում եր հայերի և սերբերի վերաբեր-

մամբ Ռուսաստանի գործ դրած քաղաքական ինտրիգներին. «Ռուսները — գրում է նա — անընդհատ խաբեբայություններով են զբաղված: — Սկզբում նրանք ստեղծեցին հայկական atrocities: Ապա laterna magica յի միջոցով ցույց տվեցին սերբերին «Մեծ Սերբիան»՝ ակնարկելով դրանով ռուս-սերբական ռազմական կոնվենցիայի անհրաժեշտությունը: Իսկ հիմա վրա յեն հասնում «Կրետական անկարգությունները»: Կրետական տմբողջ այս պատմությունը նպատակ ունի, ի միջի այլոց, խանգարելու անգլիացիներին դաշինքը Պրուսիայի հետ: Ուստի և այս թատերախաղը տեղի ունեցավ հենց կայսերի (Անգլիա) ժամանելու պահին, վորպեսզի Դադստոնը ֆիլհելենիզմի խաղ կատարի, իսկ լիբերալները վոգեկորվում են կրետական գառազողբերով: Կայսերը պետք է կանխեր ռուսներին և Կրետան հույների ձեռքը տար, բայց ռուսները նորից ցույց տվին, վոր յեթե Կրետան Հունաստանին անցնելու լինի, ապա միայն Ռուսաստանի շնորհիվ»<sup>76</sup>

✓ «Ամենագոր ցարի միջոցով ժողովուրդներին ազատագրելու ֆրազը, — գրում էր Ենգելսը 1890 թվին ցարիզմի արտաքին քաղաքականությանը նվիրած հոդվածում, — վաղուց արդեն հնացել է»<sup>77</sup> այն պետք է գալիս հիմա հազիվ միայն Կրետային կամ Հայաստանին, բայց նրանով չի կարելի այլևս ազդեցություն գործել Յեվրոպայում նույնիսկ քրիստոնեորեն — բարեպաշտ անգլիական լիբերալների վրա: Թրետայի կամ Հայաստանի խաթեր համար յեվրոպական պատերազմի ուսկ չի անի նույնիսկ ցարով հմայվող Դադստոնը...»<sup>77</sup>

Այս տողերը տպագրելու պահին ցարիզմի «ազատարար միսիայի» ֆրազը, իրոք դեռ չէր կորցրել իր ուժը հայերի համար, և հայերի ազգային ազատագրման կուսակիցները սնվում էին հենց ցարի խանդավառ յերկրպագու Դադստոնի վրա դրած հույսերով: Ենգելսին գրած նամակում Աթաբեկյանը վրդովմունք էր հայտնում հայկական հարցի նկատմամբ պետությունների հանդես բերած անտարբերության առիթով: Սակայն այդ վրդովմունքը անուղղակի մի ազդարարն էր այն սպասելիքների, վոր ունեյին հայ «սոցիալիստները» պետություններից: Այդ սպասելիքները հետագայում ավելի ևս ուժեղացան Սասունի ապստամբության (1894 թ.) հե-

տեանքով հայերի դեմ սկսած հալածանքների սաստկացման առիթով: Պատրվակ բռնելով ապստամբությունը ճնշելու համար Թյուրքիայի գործ դրած դաժան միջոցները — Սուլթանին Թյուրքիայի բաժանման ծրագիր առաջադրեց. անգլիական պահպանողականները, քայլելով 80-ական թ.թ. սկզբների անգլիական լիբերալների ուղեգծով, հրապարակ յեկան հայերին «փրկողներին» դերում. փաստորեն նրանց ձգտումն էր միայն ամրացնել իրենց դիրքերը Յեգիպտոսում: Սակայն ռուս-ֆրանսիական դիպլոմատիան կարողացավ այս անգամ ևս կանխել բրիտանական կաբինետի մերձավոր-արևելյան մեքենայությունները՝ 1895 թ. Թուրքաց-Հայաստանի Մալիսյան ռեֆորմների ծրագիրը, ստորագրված Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կողմից, նորից ամրապնդեց Թյուրքիայի status quo-ն, մի ավելորդ անգամ ևս ապահովագրելով Թյուրքիայի այն գոյավիճակը, վորը, փոխաբերելով Մարքսի արտահայտությունը, թույլ չէր տալիս սուլթանին ազատվելու ցարի ձեռքից, իսկ հայերին — սուլթանի ձեռքից: Աթաբեկյանի ու նրա համախոհների գործադրած մարքսիստական, սոցիալիստական ֆրագիոլոգիայի չքացումը 90-ական թ.թ. կեսերի Կովկասահայ նացիոնալիստական գրականության յեջերից ժամանակի կողմնակի ցուցանիշներից էր: Հավերժացնելով հայերի կախումը Թյուրքիայից, պետություններին, հայ նացիոնալիստների նախաձեռնությունից առիթված, միջամտությունը հայերի «պաշտպան» էր դարձնում նրանց, Կովկասահայ ազգայնականների համար դրանով վերանց, Կովկասահայ ազգայնականների համար դրանով վերանցում էր նաև հայկական խնդրի հեղափոխական ձևակերպության կարիքը: Հայաստանի ազգային ինքնորոշման հեղափոխական դրույթն ու լուծումը հնարավոր դարձավ իսկապես միայն ցարիզմի անկման հաջորդ ուր՝ յեվրոպական հավասարակշռության կազմալուծման և պրոլետարական հեղափոխության վերելքի պայմաններում:

Ինչ վերաբերում է հայ ազգային շարժման, այն մեղսակից չէր վոչ ցարիզմի անկմանը ու վոչ ևլ այն իրապես հեղափոխական մասսայական շարժմանը, վոր պատճառ յեղավ դրան: Ավելի քան այդ՝ հայ ազգային շարժումը պատմականորեն անհաշտ բաղխման մեջ էր ցարիզմի անկման համար մզվող հեղափոխական պայքարի հետ:

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. „Dokumente des Sozialismus“, Stuttgart 1903, II—III Bd., *յեր.* 562—563.
2. «Պրոլետարիատի Կոիվ», 1903, №2—3 (ապրիլ-մայիս)
3. «Նորք», Յերեվան 1924, գիրք IV, *յեր.* 125.
4. Այդ հոդվածները, իսկապես, ապված են „Neue Zeit“-ում, 1895, II. №№ 27, 28, 29, 32 և 33 „Атв“ ստորագրութամբ:
5. «Հորիզոն», 1916, № 14.
6. «Վերելք», Յերեվան 1924, *յեր.* 117 և հետ:
7. Աթաբեկյանի մասին համառոտ տեղեկություններ և առիթս М. М. Бонович: „Члены Государственной думы“, второй созыв, М. 1907. *յեր.* 459.
8. Fr. Engels, „Die auswärtige Politik des russischen Zarentums“ — („Neue Zeit“, 1890, *յեր.* 193):
9. К. Маркс и Фр. Энгельс, „Сочинения“ М. 1924. т. X. *յեր.* 188:
10. Ն. տ. *յեր.* 351:
11. Ленин, „Сочинения“ изд. 2-е, т. III. *յեր.* 463:
12. Տես, որինակ, «Հնչակ» 1889 № 3, Ինտերնացիոնալի — Կոնգրեսը, և 1892, №12, Արժրոշու նեկրոլոգը:
13. «Հնչակ», 1892. № 2:
14. «Հնչակ», 1891. № 9 (առաջնորդող) և 1892 № 9 (առաջնորդող):
15. Fr. Engels, „Die auswärtige Politik etc“. („N.Z.“, 1890, *յեր.* 193):
16. Энгельс „Анти-Дюринг“. М. 1924. *յեր.* 201:
17. „Архив К. Маркса и Фр. Энгельса“, М. 1924, кн. I. *յեր.* 360:

18. К. Маркс и Фр. Энгельс. „Соч.“ М. (1924) т. X. *յեր.* 173:
19. Ն. տ. *յեր.* 182 և հետ:
20. „Kapital“, Stuttgart, 1920, I. *յեր.* 99:
21. К. Маркс и Ф. Энгельс. Соч. Гиз. 1929. т. XXI. *յեր.* 465:
22. „Соч.“ Гиз. (1924), X, *յեր.* 168, 184 և 216:
23. „Die auswärtige Politik“, („N.Z. 1890. *յեր.* 147):
24. К. Маркс и Ф. Энгельс. „Соч.“ Гиз. (1924), *յեր.* 171:
25. Ն. տ. XI. *յեր.* 427:
26. Ն. տ. X. *յեր.* 177 և 222:
27. Ն. տ. *յեր.* 188:
28. Ն. տ. *յեր.* 216:
29. Ն. տ. *յեր.* 185:
30. Ն. տ. *յեր.* 188:
31. Ն. տ. *յեր.* 222 և հետ:
32. Ն. տ. *յեր.* 183:
33. Ն. տ. *յեր.* 188:
34. „Соч.“ т. XXI. *յեր.* 463:
35. „Соч.“ (1924). т. X. *յեր.* 161 և 190:
36. Ն. տ. *յեր.* 177, 188 և 338:
- 36a. Engels. „Po und Rhein. Savoyen, Nizza und der Rhein.“ Stuttgart. 1915, *յեր.* 42:
37. Sch. „Archiv für Geschichte des Sozialismus und Arbeiterbewegung“ X. *յեր.* 66:
38. Lassalle, Nachgelassene Briefe und Schriften, herausg. v. G. Mayer, III, *յեր.* 311:
39. К. Маркс и Ф. Энгельс. „Соч.“ XXII, *յեր.* 508:
40. Ն. տ. *յեր.* 337:
41. Ն. տ. *յեր.* 468 և հետ:
42. Ն. տ. *յեր.* 362:
43. Ն. տ. Соч. XXIV, 516:
44. Ն. տ. *յեր.* 514:
45. Ն. տ. *յեր.* 457, 462:
46. Ն. տ. 462:
47. Ն. տ. „Соч.“ XXIV, *յեր.* 473, 477 և 481:

48. Энгельс „Статьи 1871—75 г.г. СПб.“ 1906  
жр. 50 и 63.
49. „Briefe an Sorge und Andere“ Stuttgart, 1919. жр. 152.
50. W. Liebknecht, Zur orient. Frage. 2. Aufl. Leipzig  
1878, жр. 57.
51. „Briefe an Sorge und Andere“, жр. 156.
52. „Сочинения“. XXIV, жр. 472, 478.
53. Ы. ш. жр. 498.
54. Ы. ш. жр. 502.
55. Архив К. Маркса и Ф. Энгельса. кн. I, жр. 307.
56. „Соч.“ IV. 574 и 489.
57. „Zur orient. Frage“. жр. 58.
58. Ы. ш. жр. 501.
59. Архив. К. Маркса и Ф. Энгельса М. 1924. кн. I.  
жр. 309.
60. Ы. ш. жр. 306.
61. Шв. Ed. Bernstein, „Die Leiden des armenischen  
Volkes und die Pflichten Europas“, Berlin 1902.
62. „Архив“. кн. I, жр. 308.
63. Шв Կառգլու հողաժը լեհական հարցի մասին  
„Neue Zeit“ 1896, II, жр. 484.
64. „Архив“, кн. I, жр. 307.
65. К. Маркс и Ф. Энгельс „В эпоху немецкой ре-  
волюции“, (1848—1850) М. 1926. жр. 243—244.
66. „Архив“, кн. I, жр. 320.
67. Ы. ш. жр. 377.
68. „Dokumente des Sozialismus“ B. II—III, жр. 562 и 564.
69. Ы. ш.
70. Kautsky, „Sozialismus und Kolonialpolitik“, Berlin  
1907. жр. 79 и 564.
71. „Соч.“, XXIV, 578.
72. Ы. ш. 580.
73. Ы. ш. 498, 501, 502, 516.
74. Briefe an Sorge жр. 157.
75. „Соч.“ IV. 478.
76. Ы. ш. жр. 320.
77. „N.Z.“. 1890. жр. 193.



25 407.

Цена 25 коп.

Н. 1.



А. ИОАННИСЯН  
ЭНГЕЛЬС  
и  
армянский вопрос  
На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.  
Москва, центр, Никольская, 10.

հարան



960

Հայաստանի ԽՍՀ Կուլտուրայի նախարարության  
ՀՀ Կուլտուրայի նախարարության

Հ Հ Հ

«Ազգային գրադարան»



NL0415960

